

# ՕՍՄԱՆԵԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ

«Մոռցուած Ցեղասպանութիւն», «Չյիշուող Ցեղասպանութիւն», «Թաքնուած Հոլոքոստ» կամ «Գաղտնի Ցեղասպանութիւն» ձեւերով ալ որակուած Հայոց Ցեղասպանութիւնը թէւ այսօր Օսմանեան Կայսրութեան ժառանգորդ Թուրքիոյ Հանրապետութեան եւ իր սերտ գործակիցներուն՝ Միացեալ Նահանգներու եւ Իսրայէլի կողմէ կ'ուրացուի, սակայն աշխարհի զանազան երկիրներուն մէջ բնակութիւն հաստատած հայերու տեւական եւ հետեւողական աշխատութիւններուն եւ թափած ջանքերուն շնորհիւ, 20-րդ դարու այս առաջին ցեղասպանութիւնը, երբեք մարդկային յիշողութեան փոշիներուն տակ չմնաց եւ խղճմտանքի տէր ժողովուրդներու երեսփոխանական ժողովները ճանչցան Հայոց Ցեղասպանութիւնը ու բացայայտօրէն յայտարարեցին, թէ 1915 թուականին հայեր ցեղասպանութեան ենթարկուած են: Այս ըսելով հանդերձ, անմիջապէս ճշդենք, որ քաղաքականութեան մէջ խիղճ եւ բարեկամութիւն չկայ: Ոչ տեւական բարեկամութիւն կայ եւ ոչ տեւական թշնամութիւն: Քաղաքական եւ տնտեսական գետնի վրայ մնայունը եւ տեւականը տուեալ պետութեան շահերն են:

Անտարակոյս չափազանց գովելի եւ գնահատելի է այս երկիրներու ընդգրկած պաշտօնական դիրքը, սակայն եւ այնպէս մեր վերքին բալասանը չեն եւ ոչ ալ վերջնական բուժումը:

Այնքան ատեն որ արար-աշխարհի գիտցած, Օսմանեան Կառավարութեան դատարաններուն ընդունած, յանցապարտները մահուան դատապարտուած հայոց ցեղասպանութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան կառավարութիւնները կ'ուրանան, թուրքեր իրենց արինոտ անցեալին հետ չեն հաշտուիր, մեր ցար իր սաստկութեամբ պիտի շարունակուի: Երբ Փոքր Ասիոյ մէջ հայոց գոյութեան նշան եւ ապացոյց հայապատկան եկեղեցիներու, վանքերու, գերեզմաններու կործանումը՝ մեր հազարաւոր տարւոյ շակոյթի փճացումը բոլորիս աչքերուն առջեւ տեղի կ'ունենայ, մեր վերքը պիտի շարունակէ կոտտալ:

Երբ անձ մը, հաւաքականութիւն մը, կառավարութիւն մը չընդունիր, կ'ուրանայ կամ չուզեր ըմբռնել, թէ ինք անցեալին ոճիր մը գործած է, ան հակամէտ է եւ կարող նոր ոճիրներ գործելու: Օսմանեան Կայսրութեան ժառանգորդը՝ Թուրքիոյ Հանրապետութիւնը, իր 80 տարուայ գոյութեան ընթացքին քանիցս փաստեց այս իրողութիւնը:

Օսմանեան Կայսրութեան փլուզումը արագացնող «Հայկական Հարց»-ը անցեալին Եւրոպական Պետութիւններու առօրեայ քաղաքականութեանը նիւթն էր, այսօր ալ՝ Հայոց Ցեղասպանութիւնն է: Անժխտելի իրողութիւն է, թէ աշխարհի վրայ ոչ մէկ բան կը կորսուի, այլ կը կերպարանափոխուի:

\* \* \*

19-րդ դարուն Օսմանեան Կայսրութիւնը հասած էր իր կործանման շրջանին:

Օսմանեան Կայսրութիւնը կայսրութիւն մըն էր առանց ինքնուրոյն ժողովուրդի, ինչպէս անցեալին եղած էին բոլոր կայսրութիւնները: Կայսրութիւն մըն էր, ուր թէ՛ մահմետական եւ թէ՛ քրիստոնէայ ազգեր նոյն դրօշակին տակ հաւաքուած էին: Օսմանեան ազգային հասկացողութիւն մը, ազգային զգացում մը չկար եւ չէր ալ կրնար ըլլալ: Զանազան ազգերը իր մէջ պարփակող այս կայսրութեան մէջ օսմանացի թուրքը փոքրամասնութիւն մըն էր:

Կայսրութիւնը ազգային քայլերգ իսկ չունէր: Երբ 1908-ին, Երիտթուրքերու յեղափոխութեամբ Սուլթան Համիտ կը ստիպուէր սահմանադրութիւնը վերահաստատել, Սելանիքի ու Պոլսոյ մէջ, ուրախութեան ցոյցերու ընթացքին, ազգային քայլերգի չգոյութեան պատճառով ֆրանսական Մարսէլեզը երգուած էր:

Օսմանեան Կայսրութեան մէջ թրքութեան գաղափարը եւ հետեւաբար թուրք ազգային գիտակցութիւնը չափազանց տկարացած էր:

Փոքր Ասիոյ մէջ, Օսմանեան Պետութիւնը հաստատող Օսմանացի թուրքերը, իրենց սահմանները ընդարձակելու համար, նախ կը գրաւեն շրջանի միւս թրքական պէտութիւնները (իշխանութիւնները): Երբ Լենկիմուր Փոքր Ասիա կը մտնէ ու հողերը գրաւուած այդ թուրք պէտերու օգնութեամբ Օսմանեան սուլթանը՝ Պայազիտ Ա.-ը, պարտութեան կը մատնէ, զանիկա կալանաւորուած քաղաքէ քաղաք կը պտտցնէ: Ի տես սուլթանին նուաստացումի ենթարկման օսմանացին ինքզինքը թրքութենէ ձերբազատելով թրքութեան դէմ ատելութիւն կը զգայ:

Իրենց կրօնքին՝ իսլամութեան եւ իսլամութեան հետեւանքով ալ արապական ու յետոյ ալ պարսկական մշակոյթներու ազդեցութեամբ թուրքին ազգային զգացումը հետզհետէ կը տկարանայ: Մինչեւ 1911, օսմանեան դպրոցներու մէջ փոխանակ թրքական պատմութիւն դասաւանդուելու, Մուհամմէտի կենսագրութեամբ սկսած Մահմետական-Օսմանեան պատմութիւն մը կը սորվեցուի:

Մինչեւ 19-րդ դար հայրենիքի ըմբռնում չկայ: Հայրենիք բառը կը գործածուի որպէս ծննդավայր կամ բնակավայր իմաստով:

Օսմանեան Կայսրութեան ղեկավարութիւնն ալ՝ սուլթանները եւ մեծ վեզիրները, որոնցմէ ոմանք խառն կամ ոչ-մահմետական ծագում ունեցած են, ի շահ այս բազմազգ պետութեան գոյատեւման, թուրք ազգայնականութեան բնաւ ուժ չեն տուած: Ճիշդ այդ պատճառով ալ, հանրապետական շրջանին, թուրք ազգային գիտակցութեան գաղափարը մշակող մտաւորական դասակարգը, զանոնք մեղադրած է թուրք ցեղը բնաջնջելու յանցանքով:

Փոքր տարիքին մահմետականացուցուած (տէվճիբմէ) տղոցմէ ոմանք բարձր ուսում ստանալէ ու պետական վարչամեքենային մէջ պատասխանատու պաշտօններու բարձրանալէ յետոյ, թուրքերուն միշտ վատ աչքով նայած են:

Օսմանեան շրջանին մտաւորական ու հարուստ դասակարգին համար թուրք բառը հաճելի իմաստ մը չէ ունեցած: Գործածուած է որպէս անարգական բառ՝ գիւղացի, կոշտ, անուս, հասկացողութենէ զուրկ, անխելք իմաստներով: Թուրք պատմաբան Նախմա Մուսթաֆա Էֆէնտի իր «Թարիհտէ Թիւրքլէր» անուն գրքին մէջ թուրքը ներկայացուցած է հետեւեալ բառերով. «հասկացողութենէ զուրկ, խարդախ, տգեղ դիմագիծով անձ մը»: Եւրոպացին ալ թուրքին վատ աչքով նայած է: Անոնց համար թուրք կը նշանակէր բառբարոս, բռնակալ, բիրտ, իմացականութենէ զուրկ անհատ մը:

Երբ հունգարացի արեւելագետ եւ դասախօս Վեմպերի (Vambery) Միջին Ասիոյ վաչկատուն ու թափառական թուրքերուն եւ Փոքր Ասիոյ օսմանացի թուրքերուն ցեղային ու մշակութային կապերուն մասին ելոյթներ կ'ունենայ, ուսեալ դասակարգը կ'ընդվզի, ինքզինք նախատուած կը զգայ:

Ազգային գիտակցութեան չգոյութեան հետեւանք Օսմանեան սահմաններու մէջ ապրող ազգերու ազատագրական շարժումները փոխանակ ազգային ինքնորոշում նկատուելու, կը մակադրուի որպէս ապերախտութիւն եւ դաւաճանութիւն: Թուրք, պուլկար, հայ, յոյն, հրեայ, արապ, սերպ, մագլետնացի չկար, այլ կար Օսմանացի: Որով ինչո՞ւ սահմանային ազգերը կը բաժնուէին: Ատիկա ապերախտութիւն էր, դաւաճանութիւն էր:

Սահմանային ազգերէն սերպերու ազատագրական շարժումները արեան մէջ կը զսպուին: Սակայն արտաքին ազդեցութիւններու տակ Օսմանեան Պետութիւնը կը ստիպուի 1826-ին Ազգերման-ի եւ 1828-ին ալ Էտիբնէ-ի համաձայնութիւնները ստորագրել: Ըստ այս բարեկարգումներու համաձայնութիւններուն սերպ մը մահմետականի մը հաւասար պիտի նկատուի եւ հոն բնակչութիւն հաստատած թուրք գիւղացին իր հողը սերպերուն ծախելով Փոքր Ասիա պիտի գաղթէ: Հակառակ այս համաձայնութեան շատ քիչ թիւով գիւղացիներ իրենց հողը կը ծախեն ու կը գաղթեն:

Ըստ իսլամական կրօնքին «Իսլամը միշտ բարձր է»: Յաղթական Օսմանացին, արտաքին ճնշումներու հետեւանքով, երբ կը ստիպուի իր ծառային (raya) հետ, հաւասարի հաւասար համաձայնութիւն ստորագրել, իր մէջ բարեկարգումներու գաղափարին դէմ ընդվզում մը, անհանդուրժողականութիւն մը կը սկսի:



1839-ի Նոյեմբերի 3-ին կը յայտարարուի Կիւլիանէ Հաթթ-ը Հիւմայուն-ը (Կիւլիանէի հրովարտակը), Օսմանեան Պետութեան բոլոր հպատակներուն շնորհելով օրէնքի առջեւ հաւասարութիւն:

Մեծ վեզիր Ալի փաշա, Ղրիմի պատերազմին վերջ տուող Փարիզի Դաշնագրի (30 Մարտ 1856) նախօրեակին, Անգլիոյ դեսպան Լորտ Սթրէթֆորտ Տը Ռէտգլիֆի (Stradford de Redcliffe) յորդորով, 12 Փետրուար 1856-ին, կը յայտարարէ Թանզիմաթը Հայրիյէ (Tanzimat-i Hayriye) հրովարտակը (Հաթթը Հիւմային) Ըստ այս հրովարտակի 3-րդ յօդուածին ոչ-իսլամ ժողովուրդներ, որոշ պայմանաժամի մը մէջ, պիտի պատրաստեն իրենց համայնքին ընկերային, կրօնական եւ մշակութային կառուցուածքը յօրինող «կանոնագիր» մը ու զայն պիտի ներկայացնեն կառավարութեան: Տոքթ. Մէրվիչէն, Տոքթ. Ռուսինեան, Գրիգոր Օտեան, Գրիգոր Աղաթօն, Պալեան եւ Կարապետ Իւթիւճեան կը պատրաստեն մեր «Ազգային Սահմանադրութիւն» կոչած այս 145 յօդուածէ բաղկացեալ եւ 20 Մայիս-ին Ազգային Ընդհանուր Ժողովէն վաւերացեալ «կանոնագիր»-ը, ու 24 Մայիս 1860-ին կը յանձնեն պետութեան: Կառավարութիւնը կարգ մը փոփոխութիւններէ յետոյ, 99 յօդուածի վերածուած այս «կանոնագիր»-ը 17 Մարտ 1863-ին կը վաւերացնէ:

Ալի փաշայի եպարքոսութեան (վարչապետ) շրջանին, Պոլսոյ մէջ հայերու դիրքը ու ազդեցութիւնը աւելի կը զօրանայ, ինչ որ ազգայնամոլ մահմետականներու նախանձը կը գրգռէ:

1876-ի Նոյեմբերի 26-ին Միթհատ փաշա կը նշանակուի մեծ վեզիր: Թէեւ ան պետական շրջանակներու մէջ ճանչցուած է որպէս յառաջդիմական անձ, բայց ըստ Պուլկարներու, ան իրենց ջարդարարը, իրենց դահիճն էր: 1867-ի Պուլկարական ինքնավարական պահանջներուն արիւնալի ձեւով արգելք եղած, գիւղացիները ահաբեկչութեան ենթարկած, զանոնք գլխատել տուած էր: Պուլկարներու 1875-ի ինքնավարական պահանջքի շարժումն ալ նոյն ճակատագրին կենթարկուի: Սեպտեմբերին օսմանեան զօրքը ահռելի ջարդ մը կը կատարէ: Խողխողուած 10,000 պուլկարներու լուրը ամբողջ Եւրոպան կը ցնցէ: «Ութը դար առաջ Կեդրոնական Ասիայէն Փոքր Ասիա եկած թուրքերը տակաւին չեն փոխուած», «Թուրքերը բռնութեամբ Եւրոպայէն վտարել»

լոգունգները կը սկսին շրջագայիլ: Եւրոպական պետութիւնները կորոշեն Կ. Պոլսոյ մէջ յատուկ դեսպանաժողով մը գումարել: Ներսէս Վարժապետեան Պատրիարք անգլիոյ դեսպանէն կը խնդրէ հայերու կացութիւնը նկատի առնել: Ասիկա հայկական հարցին առաջին անգամ օտար պետութեան մը ներկայացումն է: Մինչ այդ Վանի շուկան կը հրկիզուի: Բոլոր խանութները, որոնք մեծամասնութեամբ հայերու կը պատկանէին, կը թալանուին: Ապահովութեան պաշտօնեաներն ալ կը մասնակցին կողոպուտին: Միթեատ փաշա, դեսպաններու ժողովին Օսմանեան Կայսրութեան ներքին գործերուն միջամտելուն արգելք հանդիսանալու մտադրութեամբ, 30 Նոյեմբեր 1876-ին, կը յայտարարէ Օսմանեան Կայսրութեան առաջին սահմանադրութիւնը, որու պատրաստութեան մէջ իր քարտուղարը՝ Գրիգոր Օտեանը մեծ դեր կունենայ:

Օսմանացին, Օսմանեան Կայսրութեան ենթակայ քրիստոնէայ ազգի մը ինքնավար վիճակ ստանալու գաղափարին հետ երբեք չէ կրցած հաշտուիլ:

Հայոց Պատրիարքարանին, Արեւելեան Փոքր Ասիոյ հայաշատ նահանգներուն մէջ ոչ թէ ինքնավարութիւն, այլ հայ ժողովուրդի կեանքի պայմաններուն բարելաւումի համար տարիներէ ի վեր կատարած խնդրանքները միշտ անպատասխան կը մնան: Բարձր Դուռը «Հայկական Հարց»-ին բնաւ կարելորութիւն չտար:

Rev. Frederick Davis Greene, 1897-ին հրատարակած իր «The Rule of the Turk, and the Armenian Crisis» անուն գրքին մէջ, ակնարկելով սահմանադրութեան, գրած է. «Երբ այս հրովարտակի մեկնաբանութիւնը եւ գործադրութիւնը բացարձակապէս թուրք կառավարութեան ձեռքն է, կարիք չկայ ըսելու, թէ ասիկա մեռեալ հրովարտակ մըն է»:



Ներսէս Վարժապետեան Պատրիարք

Պուլկարներու պաշտպան ու անոնց դաւանակից Ռուսերը, 24 Ապրիլ 1877-ի առաւօտեան, առանց իսկ պատերազմ յայտարարելու, Ռումանիոյ սահմաններէն Պուլկարիա կը մտնեն: Կը սկսի 1877-78-ի Ռուս-Օսմանական պատերազմը: Ռուսիոյ Կովկասեան բանակը հրամանատարութեամբ ծագումով հայ զօրավարներու՝ Յովհաննէս Լազարէֆ, Յակոբ Ալխազով, Լորիս Մելիքով, Արշակ Տէր-Ղուկասով, կը գրաւէ Արթուինը, Արտահանը, Անին, Կարսը, Պաթումը, Պէյազիտը եւ արեւմուտքի բանակն ալ մինչեւ Կ. Պոլսոյ արուարձաններէն Սան Ստեֆանօ (Եէշիքէօյ) կը հասնի: Ռուսերուն նեղուցներուն չափազանց մօտեցումը Անգլիոյ մտահոգութիւն կը պատճառէ եւ իր նաւատորմը Տարտանէլ (Չանաքքալէ) կը դրկէ: 3 Մարտ 1878-ին կը ստորագրուի Սան Ստեֆանոյի դաշնագիրը, որու համաձայն Պուլկարները կը ստանան ներքին ինքնավարութիւն, Օսմանեան կայսրութեան ենթակայ պուլկար իշխանի մը ղեկավարութեամբ:

Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածով «Հայկական Հարցը» առաջին անգամ, պաշտօնապէս, միջազգային բնոյթ կը ստանայ: Բանակցութիւնները կը կատարուին Տատեան ընտանիքի ապարանքին մէջ, Օսմանեան պատուիրակութեան եւ Նիքօլա Մեծ Դուքսի միջեւ, Ներսէս Վարժապետեան Պատրիարքի ներկայութեամբ: Օսմանեան Կայսրութիւնը կը խոստանայ արեւելեան նահանգներու մէջ բարեկարգութիւններ կատարել: Ռուս բանակն ալ, արեւելեան նահանգներու մէջ իր ներկայութեամբ, պիտի ապահովէ բարեկարգումներու գործադրութիւնը:

Բարեկարգումները Թրքահայաստանի հայ բնակչութեան համար չափազանց կենսական էր: Թուրքերու եւ քիւրտերու կատարած արեւանգումներն ու ոճրագործութիւնները չափ ու սահման չունէին: Արտը քաղել, բերքը հաւաքել կառավարութեան մթերանոցի պաշտօնէային ներկայութեան կարելի էր: 15 տարեկանէն մինչեւ 75 տարու իւրաքանչիւր այր մարդ ամէն տարի «քէլլէ վերկիսի» (գլխահարկ) պէտք է վճարէր, նաեւ հողի, անասունի...տուրք: Այդ տուրքերու գումարը ոմանց համար անյքան բարձր կըլլար, որ անոնք այդ տուրքերը կարենալ վճարելու համար մեծ քաղաքներ կերթային, զանազան ծանր աշխատանքով դրամ շահելու: Թէեւ հայը զինուորական ծառայութեան չէր կանչուեր, սակայն պէտք է «պէտէլ վերկիսի» (փրկագին) վճարէր: Դատարանները «Շերիաթ մահքէմէսի» էին, իսլամ կրօնքի սկզբունքներուն համաձայն կը գործէին, ուստի քրիստոնէայ հայը օրէնքի պաշտպանութիւնը չէր կրնար վայելել: Երկու մահմետական վկայով հայ մը ամենաձանր պատիժի ենթարկել սովորական երեւոյթ մըն էր: Քաղաքին մէջ ձի հեծնելու իրաւունքը միայն Օսմանացի իսլամին վերապահուած էր: Թուրքը իր եաթաղանին սրութիւնը կրնար հայու մը վզին վրայ փորձել: Արեւելեան նահանգներու մէջ կեանքը անհանդուրժելի էր:



Տատաններու ապարանքը

Մահմանային ազգերու ներկայացուցած բարեկարգութիւններու պահանջները կը նկատուէին կայսրութիւնը փլուզման ենթարկելու նպատակ ունեցող դաւաճանութիւններ: Բարեկարգութիւն ինդրող ժողովուրդները եւ բարեկարգութիւններուն գործադրութիւնը պահանջող պետութիւնները քրիստոնէաներն էին: Քրիստոնէան արհամարող Օսմանացին, այժմ կը սկսէր իրմէ աւելի զօրաւոր քրիստոնէայ պետութեան դէմ աստելութիւն եւ իրմէ շատ աւելի փոքր քրիստոնէայ ժողովուրդներու դէմ ալ ուի սնուցանել: Իր այս աստելութեան ու ուիի զգացումին յագուրդ տալու նպատակով, յարմար առիթներով, փոքրամասնութիւնները կոտորած է ու ջարդած:

Թուրքը կը զգայ, թէ «օսմանացի» քաղաքականութիւնը այլեւս սնանկացած է: Նոր քաղաքականութեան մը, նոր ինքնութեան մը կարիքը ի յայտ կուգայ: Հրապարակը կողողողի Բան-Իսլամիզմի եւ Բան-Թուրանիզմի գաղափարներով:

Յաղթանակէ յաղթանակ վազած Օսմանեան Կայսրութիւնը այլեւս «Եւրոպայի Հիւանդ Մարդը»-ն է: Մեծ պետութիւնները զայն ինչպէս բաժնելու տեսակէտին մէջ չեն կրնար համաձայնիլ: Շնորհիւ այդ կացութեան հիւանդը կը շարունակէ ապրիլ: Անգլիոյ վարչապետ Լորտ Սալզբորի (Lord Salisbury), 1895-ին, մեծ վեզիր Սայիթ Հալիմ Փաշայի ուղղեալ իր նամակին մէջ կը գրէ, թէ Օսմանեան Կայսրութիւնը Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ համաձայնութեան մը չգոյութեան պատճառով կը շարունակէ գոյատեւել: Այդ համաձայնութիւնը երբեք չիրականանար: 16 Մայիս 1916-ին, Անգլիա եւ Ֆրանսա, Օսմանեան Կայսրութիւնը իրարու մէջ բաժնելու համար, դիւանագէտներ անգլիացի Սըր Մարք Սայքսի (Sir Mark Sykes) եւ ֆրանսացի Ժորժ Փիքոյի (George Picot) պատրաստած «Սայքս-Փիքո» (Sykes-Picot) համաձայնութիւնը կը ստորագրեն:

Ուսեալ դասակարգը եւ երիտօրօքերը հաշտուած էին «Հիւանդ Մարդ»-ու գաղափարին հետ, սակայն չէին ընդունիր, թէ զայն փրկելու համար որեւէ բան ընել կարելի չէր: Երբ 23 Յուլիս 1908-ին, Էնվեր, այն ատեն տակաւին հազարապետ, Մագէտոնիոյ Քէօբրիւլի գիւղաքաղաքին մէջ յեղափոխութիւն կը յայտարարէ, «Հիւանդը բժշկեցինք» կըսէ: 1908-ին հռչակուած սահմանադրութիւնն ալ փլուզումը չի կասեցնէր:

Մինչեւ սահմանադրութեան վերահռչակումը մահմետականը, իր կրօնական հասկացողութեամբ, ինքզինքը միշտ ուրիշներէն գերադաս նկատած էր: Երիտօրօքերու պարտադրութեամբ գործադրութեան դրուած սահմանադրութեամբ ոչ-մահմետական տարրը մահմետականներուն վայելած իրաւունքներուն կը տիրանար: Այս պարագան թէ՛ ժողովուրդի հասարակ խաւերուն եւ թէ՛ պետական որոշ շրջանակներու մէջ դժգոհութիւն կը յառաջացնէ, որով սահմանադրութեան հռչակումով քրիստոնէայ փոքրամասնութիւններուն դէմ եղած ատելութեան զգացումը կը զօրանայ:



Սահմանադրութեան հռչակման առթիւ հրատարակուած բացիկ. Ժապաւենի վրայ կան 5 տարբեր լեզուներով գրութիւններ

Օսմանացին զինուորական եւ պետական ծառայութիւնները, որպէս պատուաբեր ասպարէզ, իրեն վերապահած էր եւ տարբեր ասպարէզներու նկատմամբ շատ հետաքրքրութիւն ցոյց չէր տուած: 1882-ին, Պոլիս հաստատուած առեւտրական գիտութիւններու ուսուցման վարժարան մը աշակերտի չզոյութեան պատճառով գոցուած էր: Ոչ-պատուաբեր ասպարէզներ կը նկատուէին առեւտուրը, ճարտարարուեստը, արհեստաւորութիւնը: Փոքրամասնութիւններ իրենց ձգուած այս մարզերուն մէջ մեծ յաջողութիւններ արձանագրած էին ու հարստացած:

Ի հետեւանք Օսմանեան Կայսրութեան զանազան առիթներով ու պատճառներով Եւրոպական պետութիւններուն շնորհած առեւտրական մենաշնորհներուն (Capitulation) օտարահպատակներ առեւտրական մեծ կեդրոններ բնակութիւն հաստատած էին: Ասոնք ու փոքրամասնութեան որոշ մեկ մասը կը գործէին որպէս եւրոպացիներու առեւտրական գործակատարները:

Իթթիհատի ծննդավայր Սելանիկ (Thessaloniki) հրեաներուն եւ տէօսմէներուն (Սապէթայ) մեծամասնութիւն կազմած բազմազգ,(60,000 հրեայ, 20,000 տէօսմէ, 40,000 յոյն, 20,000 մահմետական թուրք, ալպանացի, պոսնիացի..) Ազատ Ռմնադիրներու (Free Mason) Օթեակներով լեցուն քաղաք մըն էր: Անգլիոյ եւ Ֆրանսայի առետրականները կը գործակցէին Կ. Պոլսոյ հայ եւ յոյն առետրականներուն հետ: Նոր շուկաներ փնտռող Գերմանիան առետրական կապեր կը հաստատէ Սելանիկի հրեաներուն ու տէօսմէներուն հետ, որոնք, իրենց կարգին, կուգեն Կ. Պոլսոյ առետրական շուկան ձեռք անցընել: Իսլամացած հրեաներ առ հասարակ կանդամակցէին «Մակեդոնիա Ռիզորդա» օթեակին, որուն «վարպետ»-ն էր օսմանեան երեսփոխան Էմանուէլ Քարսու եւ անդամներէն էին Իթթիհատական Թալաթ, Ճաւիթ, Տօթթ. Նազըմ, Սիւլէյման Ֆեհմի, Իսմայիլ Ճանպօլատ, Սիթիհատ Շիքրի եւ ուրիշներ: Հրեաներն ու տէօսմէները տեղոյն օթեակներուն միջոցով սերտ յարաբերութիւններ կը մշակէն Իթթիհատականներու հետ ու անոնց աջակցութիւն ցոյց կուտան: Թալաթ կընտրուի, Սիջին Արեւելքի վրայ իր ազդեցութիւնը տարածած «Grand Orient de la Turquie» օթեակին գերագոյն վարպետը՝ «մասոնապետը» Շնորհիւ այս օթեակներու սիոնիստ շարժումը կը թափանցէ իթթիհատէն ներս:

Սիոնիստներ Համիտին մօտեցած, անկէ եւրոպայի հրեաներուն դէպի Պաղեստին զանգուածային գաղթի արտօնութիւնը ուզած էին, ի փոխարէն խոստանալով պետութեան պարտքին կէտը վճարել ու եւրոպայի մէջ սուլթանին հակաճառող հայկական թերթերը լռեցնել: Համիտ այս առաջարկը մերժած, սակայն թոյլատրած էր որ հրեաներ անհատապէս այդ շրջանակներու մէջ հող գնեն:

Օսմանացի թուրքը մինչեւ 1908-ի սահմանադրութեան հռչակումը քրիստոնէայ փոքրամասնութիւնները չէր զինուորագրած: Հետեւաբար միայն ինքն էր որ պատերազմական ճակատներու վրայ մեռած, «շէհիթ» եղած էր եւ քրիստոնէան իր առօրեան շարունակած:

Ընդգրկուած այս քաղաքականութեան հետեւանքով ստեղծուած դասակարգային բաժանումէն դժգոհ օսմանացի թուրքին մէջ նախանձը, չար նախանձը կը զօրանայ, ինչ որ անոր ատելութեան եւ վրէժխնդրութեան զգացումները կը մտրակէ:

Մինչեւ 19-րդ դարու սկիզբը, Օսմանացին Եւրոպայի քրիստոնէայ պետութիւնները արհամարհած էր, անոնց կարելորութիւն չէր տուած: Անոնց հետ հաւասարի հաւասար քաղաքական համաձայնութիւններ ստորագրել իր կրօնական համոզումներուն եւ հասկացողութիւններուն հակառակ էր: Ինքզինք այնքան բարձր նկատած էր, որ եւրոպական լեզուներ սորվիլ իսկ իրեն համար վարկաբեկում նկատած էր:

19-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ օսմանեան բանակը արդիականացնելու համար կայսրութիւնը կը ստիպուէր եւրոպական գիտարուեստէն օգտուիլ: Սա՛ հաճելի երեւոյթ մը չէր: Ասիկա արեւմուտքին գերակայութիւնը բացայայտօրէն ընդունիլ էր:

Երկիրը փլուզումէ ազատելու նպատակով գործի գլուխ եկած Իթիհատ կուսակցութիւնն ալ այդ փլուզումին արգելք չի կրնար ըլլալ: Սուլթան Համիտի գահընկէցութիւնն ալ օգուտ չունենար:

18 Հոկտեմբեր 1912-ին կը սկսի Պալքանեան պատերազմը: Պուլկարները մինչեւ Չաթալճա կը յառաջանան: Սերպերը ամբողջ Մակեդոնիան կը գրաւեն: 1829-ին իր անկախութեան տիրացած Յունաստան կը գրաւէ Սելանիքը եւ Եգէական կղզիները: Օսմանացիները Էտիրնէ-էն մինչեւ Ատրիադիք Ծով իրենց իշխանութեան ենթակայ հողերը կը կորսնցնեն: Նոյնիսկ Պոլսոյ գրաւման վտանգին հետ դէմ հանդիման կուգան: Պետական աւագանին, գանձը, արխիւները Էսզիշէիթ տանելու համար պատրաստութիւններ կը կատարեն:



Եւրոպացիներու գերակայութիւնը բացայայտօրէն զգալի է: Նուաստացումը ծնունդ կուտայ իրենց փառաւոր անցեալը վերապրելու ցանկութեան: Զինադադարէն յետոյ, Օսմանեան Կայսրութեան պատմութեան մէջ առաջին անգամ, Ֆաթիհ Սուլթան Մէհմէտի Կ. Պոլիսը գրաւման տարեդարձը կը տօնուի, յիշելու համար, թէ իրենք Ֆաթիհներու, Քանունիներու թոռներն են:

Բայց եւ այնպէս «Հիւանդ Մարդ»-ուն վիճակը ծանր է:

Օսմանեան Կայսրութեան կործանումով թրքութեան ալ անհետանալու գաղափարը մտաւորական շրջանակին մէջ խուճապի մը պատճառը կըլլայ: Պալքանեան պատերազմէն յետոյ, միւս ազգերու դէմ զգացուած ատելութեան եւ թշնամութեան հետեւանք ծնունդ կառնէ թուրք ազգային գիտակցութեան գաղափարախօսութիւնը եւ թրքացնելու քաղաքականութիւնը:

Երբ այլեւս Օսմանեան Կայսրութիւնը պատերազմներուն փոխանակ յաղթանակներ արձանագրելու հողային կորուստներ կ'ունենայ, այդ հողամասերէն դէպի Անատոլու գաղթեր կը սկսին: Միլիոնաւոր գաղթականներ, պատրաստուած ծրագրի մը համաձայն, Անատոլուի զանազան վայրերը կը տեղաւորուին: Հայերու մեծամասնութիւն կազմած նահանգներու մէջ 1878-էն մինչեւ 1904 շուրջ 800,000 գաղթականներու տեղ կը տրուի: Գաղթականներ իրենց բնակչութիւն հաստատած վայրերը հայրենակցական միութիւններ կը հաստատեն ու վրէժխնդրութեան զգացումը վառ պահելու նպատակով թերթեր կը հրատարակեն, ուր կարելի է կարդալ հետեւեալներու նման տողերը, որոնք օրուայ մտայնութեան եւ հետապնդուած քաղաքականութեան ցայտուն օրինակներն են:

Էյ միւսլիման քէնտինի հիչ ավութմա Եիւրեղինի եօճ ավմատան սօղութմա (Ով մահմետական ինքզինքդ մի մխիթարեր, վրէժ չլուծած սիրտդ մի պաղեցնէր) Քապրինտէ միւսթերիի ույու էյ նամտար աթամ Էվլատընըն պուկիւնքիւ ատը սասի ինթիքամ (Գերեզմանիդ մէջ հանգիստ քնացիր ով անուանի հայրս, զակիդ այսօրուայ անունը վրէժ է):

Պալքանեան պատերազմով կորսնցուած հողերը, ի մասնաւորի Իթթիհատ եւ Թերաքքի կուսակցութեան առաջնորդներուն ծննդավայր Մակետոնիոյ կորուստը, մեծ ցաւ պատճառած է: Յառաջիկային, գրագետ-լրագրող Հիւսէյին Ճահիթ Եալչըն «Ռումէլիէն արտաքսուելուն տուած ցաւը երբեք չեմ մոռցած» գրած է:

Կորսուած հողերու վերագրուման եւ վրէժ լուծելու փափաքը թուրք ազգայնականութեան վայրագ ուղղութիւն մը կուտայ: Այն վրէժը, որ «գինեպան յոյն»-էն, «խոզարած սերպ»-էն, «կաթնավաճառ պուկար»-էն չէին կրցած առնել, հայաշատ շրջաններ տեղաւորուած գաղթականներու «մուհաճիր»-ներու օգնութեամբ, առաջին աշխարհամարտի ընթացքին հայերէ կառնեն «Մեզի կռնակէն զարկին» պատճառաբանութեամբ:

Ըստ թուրքերու, քրիստոնէայ փոքրամասնութիւնները, հարկաւ հայերն ալ, իրենց շրջանի մահմետականները կը զրգոէին եւ զրգոուած մահմետականն ալ երբ կոտորածի սկսէր, փոքրամասնութիւնները աղմուկ կը հանէին ու Եւրոպական Պետութիւններու եւ Ռուսիոյ միջամտութիւնը կ'ապահովէին: Փոքրամասնութիւնները իրենց այս ընթացքով մեծ պետութիւններուն Կայսրութեան ներքին գործերուն խառնուելուն պատճառ կըլլային:

Արեւմուտքին մարդկային իրաւունքները պաշտպանելու նպատակով ըրած միջամտութիւնները կը նկատուէին ներքին գործերու խառնուելու, երկիրը բաժնելու, օսմանեան հողերուն տիրանալու համար պատրուակներ: Փոխանակ մարդկային իրաւունքներու գաղափարին հետ հաշտուելու, զայն կը մերժէին, այս գաղափարին հանդէպ ատելութիւն կը զգային ու իրենց ատելութիւնը վայրագութիւններ գործադրելով կը ցուցաբերէին: Փոքրամասնութիւններու բարեկարգութեան պահանջները կը նկատուէին մեծ պետութիւններու կողմէ երկիրը բաժան բաժան ընելու նպատակով պատրաստուած դաւեր: Ուստի բոլոր բարենորոգութեան պահանջները լինելու եւ չլինելու ակնոցով դիտած, արիւնալի ու բարբարոսական միջոցներով զսպած էին:

Կիրարկուած բռնութիւններուն եւ բարբարոսութիւններուն մէջ միշտ իրաւացի ըլլալու տեսակէտը ընկալեալ սովորութիւն մըն էր: Ահա՛, պատմաբան Եուսուֆ Հիքմէթ Պայուր ինչ կը գրէ. «Հարց պէտք է տանք, թէ նախ ո՞վ սկսած է կոտորածի: Թուրքերը առանց պատճառի հայերը մեռցուցին ըսել տարբեր բան է, երբ հայերը ապստամբեցան, մահու կենաց միջեւ գտնուող թուրքերն ալ չափազանցեալ բռնութիւն ցոյց տալով շատ հայ մեռցուցին ըսել, տարբեր բան է»:

Ահա՛ թուրք հոգեբանութիւնը. մի շտ իրաւացի ըլլալ:

Պետութիւնը, Օսմանեան Կայսրութենէն բաժնուած բոլոր քրիստոնէայ ժողովուրդներու հանդէպ սնուցած վրէժը հայերէն առած է:

Հայկական վտանգը աւելի չմեծցած ջախջախուելու էր:

Մեծ վեզիր Քեամիլ փաշա, 1878-ին, պուլկարներուն ներքին անկախութիւն ստանալէն յետոյ, «Ռումելիի մէջ մեր ծոցը օձ սնուցինք, պէտք չէ որ նոյն յիմարութիւնը ընենք մեր ասիական տաճկաստանին մէջ: Խելացիութիւնը ջնջել, վերցնել է բոլոր այն տարրերը, որոնք օր մը կրնան մեզի նոյն վտանգին հետ դէմ հանդիման բերել» ըսած է:

Օսմանացիներ եւրոպական պետութիւններու հետ կնքուած համաձայնութիւններով հայերու համար բարեկարգութիւններ խոստանալով հանդերձ, զանոնք չգործադրելու համար միջոցներ փնտռած են: Ֆրանսացի Շօբել (A. Schopell) 1904-ին հրատարակուած իր «The reforms and the protection of Christians in Turkey during 1673 until 1904» անուն գրքին մէջ ի մի հաւաքած է քրիստոնէաներու պաշտպանութեան համար ստորագրուած սուլթանական 645 հրամանագրեր, ծանուցագրեր, դաշինքներ, համաձայնութիւններ, շրջաբերականներ, որոնք երբեք լոյս աշխարհ չեն տեսած:

Մեծն Բրիտանիա համոզուած էր, թէ Օսմանեան Կայսրութիւնը վերջնականապէս կը քայքայուէր: Իր «Հնդկաստանի Ճամբայ»-ի ապահովութեան համար 4 Յունիս 1878-ին, Սուլթանին հետ եղած գաղտնի պայմանագրութեամբ մը, 3 Մարտ 1878-ին ստորագրուած Սան Ստեֆանոյի դաշնագրէն երեք ամիս յետոյ, տիրացաւ Կիպրոս կղզիին, խոստանալով արգելք ըլլալ արեւելեան նահանգներու մէջ Ռուսերու ազդեցութեան զօրացման:

Մեծն Բրիտանիոյ ճնշումներով, 13 Յուլիս 1878-ին, Սան Ստեֆանոյի դաշինքէն չորս ամիս յետոյ, գումարուեցաւ Պեռլինի Վեհաժողովը, ուր Ռուսերուն Պալքաններու եւ արեւելեան նահանգներու վրայ ունեցած ազդեցութեան վերջ տրուեցաւ: Սան Ստեֆանոյի համաձայնութեան 16-րդ յօդուածը, ըստ որոյ ռուսական բանակի հսկողութեամբ պիտի կատարուէր բարեկարգութիւնները, փոխուեցաւ 61-րդ յօդուածի եւ փոխանակ ռուս բանակի ներկայութեան, բարեկարգումներու գործադրութեան հսկիչ եղան Եւրոպայի բոլոր պետութիւնները, առանց ֆիզիքական ներկայութեան:

Այս խմբային խոստումը առանձնապէս ոչ մէկ պետութեան պարտականութիւնը ու պատասխանատուութիւնն էր, ուստի հսկիչներէն ոչ մին հետապնդեց բարեկարգումներու գործադրութիւնը, որով այս յօդուածն ալ գործադրութեան չդրուած համաձայնութիւններու կարգին դասուեցաւ: Անգլիոյ Անատոլիոյ գլխաւոր դեսպան Թ. Վ. Ուիլսըն իր կառավարութեան դրկած 16 Յունիս 1880 թուակիր տեղեկատուութեան մէջ նշած է, թէ Թուրքիոյ վրայ Եւրոպայի հսկողութիւնը անհրաժեշտ է եւ բարեկարգումներու գործադրութեան համար ալ արտաքին ճնշումը հարկաւոր:

Սուլթան Համիտ «Կը մեռնիմ եւ սակայն Պեռլինի Վեհաժողովի 61-րդ յօդուածը գործադրութեան չեմ դներ» ըսած է: Մեծն Բրիտանիոյ վարչապետներէն Լոյս ճորճ (Lloyd George) իր յուշերուն մէջ, ակնարկելով Պեռլինի Վեհաժողովին, հետեւեալը գրած է. «Եթէ մեր չարաբաստիկ միջամտութիւնը չըլլար, 1878-ին, Սան Ստեֆանոյի դաշնագրով, հայեր կանցնէին Ռուսերու

պաշտպանութեան տակ: Հայաստան մեր գոհն է: Ռուսերը ստիպուած էին հեռանալու. դժբախտ հայերը նորէն ճգմուեցան զիրենք հինէն ի վեր կեղեքողներուն ոտքին տակ»:

Յառաջիկային, Իթթիհատի թերթերէն «Թանին»-ի խմբագրապետ Հիւսէին Ճահիտ «Օսմանեան Կայսրութեան Արեւելեան նահանգներու բարեկարգութեան համար 61-րդ յօդուածի գործադրութիւնը մեզի համար անկարելի է եւ երբեք չենք ներեր այդ տեսակ խնդիրներով մեզ զբաղցնողները» գրած է:

Սուլթան Համիտ վճռականօրէն որոշած է «Հայկական Հարց»-ին վերջ տալ:

Պեոլինի Վեհաժողովին, հայկական պատուիրակութեան տեղեկատուութենէն ճշդուած էր, թէ Օսմանեան հողամասերուն վրայ հայ բնակչութեան թիւը երեք միլիոն էր: Այդ թուականէն յետոյ, կարմիր սուլթանը հայաշատ նահանգներու սահմանները փոփոխութեան կենթարկէ: Միջին հաշուով 100,000 քառակուսի քիլոմէթր տարածութեամբ նահանգներու տարածքը 35,000 քառակուսի քիլոմէթրի կիջեցուի: Այս ձեւով ստեղծուած վարչական նոր քարտէսին վրայ հայեր փոքրամասնութեան կը վերածուին:

Երբ Գերմանիոյ Վիլհելմ Բ. կայսրը 1889-ի Նոյեմբերին Պոլիս կայցելէ, հայեր առիթէն օգտուելով, աղերսագրով մը իրեն կը յիշեցնեն, թէ Պեոլինի Վեհաժողովի 61-րդ յօդուածը ցարդ գործադրութեան դրուած չէ: Հայերու այս արարքը Սուլթան Համիտին զայրոյթ կը պատճառէ: «Հայկական Հարց»-ը լուծելու գաղափարը իր մէջ բոլորովին կ'արմատանայ:



Գերմանիոյ Վիլհելմ Բ. Կայսր

1890-ին, քիւրտերով եւ բանտէն ազատ արձակուած յանցապարտներով կը կազմուի Համիտիյէ Ջոկատները (Համիտիյէ Ալայլարը): Անոնք իրենց շքանշանները կը ստանային Սուլթանէն, իսկ եկամուտները՝ հայկական շրջաններու կողոպուտէն եւ թալանէն:

Երբ Սուլթան Համիտ, 1891-ին, հունգարացի արեւելագետ Վեմպերի (Vambéry)-ին տեսութիւն մը կը շնորհէ, անոր «Հայերու ձայնը կտրելու ձեւը գիտեմ, շատ մօտ ատենէն զանոնք ծունկի պիտի բերեմ:...Եւրոպան մեզմէ Ռումանիան ու Յունաստանը առնելով մեր ոտքերը կտրեց: Սերպիոյ, Պուլկարիոյ եւ Եգիպտոսի կորուստով մեր ձեռքերը կտրուեցան: Հիմա ալ «Հայկական Հարց»-ով կուզեն մեր աղիքները խլել:....մենք մեր բոլոր զօրութեամբը ասոր դէմ պիտի կենանք » ըսած է:

Այլևս ջարդերը կը գործադրուին կանխապատրաստուած ձեւերով:

3 Յունիս 1896-ին կը սկսի «Վանի մեծ դէպքը»: Բանակը քաղաքի հայ թաղերուն պաշտպան տղամարդիկը քաղաքէն հեռացնելէ յետոյ թէ՛ այդ տղամարդիկը եւ թէ՛ տեղացին կը ջարդէ: Հազարաւոր դիակներ շաքաթներով անթաղ կը մնան:

Մուշի, Վանի, Կարնոյ (Էրզրում), Խարբերդի (Էլազիզ) մէջ կեանքը անտանելի վիճակի կը հասցուի: Համիտիյէ Ջոկատներուն կողոպուտները ու ոճրագործութիւնները անպատիժ կը մնան: Շրջանի պատասխանատուները մզկիթներու պատերուն վրայ յայտարարութիւններ կը կախեն, ուր կը կարդացուի. «Բոլոր մահմետականները պէտք է իրենց պարտականութիւնները կատարեն՝ հայերը մեռցնելով, անոնց տունները կողոպտելով եւ փլցնելով: Ոչ մէկ հայ պէտք է ողջ մնայ: Ասիկա Սուլթանին հրամանն է: Անոնք, որոնք այս յայտարարութեան չեն հնազանդիր պիտի նկատուին որպէս հայ եւ պիտի մեռցուին: Իւրաքանչիւր մահմետական, այս հրահանգին հնազանդութիւնը ցոյց տալու համար, նախ պէտք է իր դրացի հայը մեռցնէ»:

1894-էն 96 հայաբնակ նահանգներու մէջ մօտաւորապէս 200,000 հայ կը ջարդուի, 100,000 կը մահմետականացուի, 100,000 կին ու աղջիկ կ'առեւանգուի եւ թուրքերու հարեմները կը տարուի: 100,000 հայ Կովկաս, 60,000 Եւրոպա եւ Ամերիկա, 12,000 ալ Պուլկարիա կը գաղթէ:



Պանք Օթոմանի գրաւումը (գծանկար)

Պատերազմական-ռազմավարական տեսութիւններու համաձայն կան փոքր պատերազմներ, մեծ պատերազմներ եւ ամբողջական պատերազմներ: Փոքր պատերազմներու պարագային կանոնաւոր բանակը կը պատերազմի հայդուկներու եւ ֆէտայիներու դէմ: Մեծ պատերազմները երկուքէ աւելի բանակներու եւ պետութիւններու պատերազմն է: Ամբողջական պատերազմը բնաջնջել է թէ՛ թշնամիին բանակը, եւ թէ՛ անզէն բնակչութիւնը: Փրուսիական ռազմավարական տեսակետի համաձայն պատերազմ մը պէտք է ըլլայ ամբողջական պատերազմ: Օսմանեան կայսրութեան, այդ շրջանին, հայերու դէմ ընդգրկած գործելակերպը փոքր պատերազմ էր, ամբողջական պատերազմի ռազմավարութեամբ՝ շրջան առ շրջան բնակչութիւնը բնաջնջել:

Օսմանեան կառավարութեան վայրագութիւնները կեցնելու համար ոչ մէկ միջոցառումի դիմող Եւրոպացիներու ուշադրութիւնը գրաւելու նպատակով, խումբ մը հայեր, 1896-ի Օգոստոսի 26-ին, Պոլսոյ Ղալաթիոյ շրջանի Օսմանեան Դրամատունը (Պանք Օթոման)

կը գրաւեն: Օսմանեան Դրամատունը հաստատուած էր 1862-ի Նոյեմբերի 15-ին, անգլիական ու ֆրանսական դրամազլխով: Կեդրոնը Փարիզ եւ Լոնտոն էր: Տնօրէնը ու Տնօրէն Խորհուրդը եւրոպացիներ էին:

Սուլթան Համիտ օգտուելով դրամատան դէպքէն, որու մասին իր լրտեսներուն միջոցաւ լուր ունեցած էր, արդէն իսկ Պոլիս բերուած Համիտիէյի 500 քիւրտերը դանակներով ու փայտերով զինած, կը դրկէ հայկական թաղերուն վրայ, տուները ու խանութները կողոպտելու եւ այր մարդիկը մեռցնելու հրամանով: Այս սարսափազդու կացութեան առջեւ վեց մեծ պետութիւնները, ստեղծուած վիճակին վերջ տալու պահանջքով, 28 Օգոստոսին, կառավարութեան յուշագիր (Nota) մը կուտան: 10,000 այր մարդ ջարդուելէ յետոյ 31 Օգոստոսին անդորրութիւնը կը վերահաստատուի:

Ապտիւլհամիտ հայերը տնտեսապէս ալ տկարացնելու նպատակով յատուկ օրէնքներ կիրարկել կուտայ եւ զանոնք խիստ հսկողութեան ու քննութեան կենթարկել:



Սահմանադրութեան հռչակման առթիւ Խարբերդի մէջ պատրաստուած նկար

Երբեմնի «Միլլէթ-ի սատրքա» (հաւատարիմ ազգ) հայերը այլեւս կայսրութեան գլխաւոր թշնամին էին: «Հայկական Հարց»-ը դարձած էր Օսմանեան Կայսրութեան լինելու կամ չլինելու հարցին:

1908-ի սահմանադրութեան հռչակումը երկրին միասնականութիւնը ապահովելու տեսակէտէ սպասուած արդիւնքը չէր տուած: Բան-Օսմանեան քաղաքականութիւնը այլեւս սնանկացած էր: Կայսրութիւնը փլուզումէ փրկելու համար նոր միջոցներ պէտք է փնտռուէր: Թերթերու մէջ կը սկսին երեւալ Բան-Իսլամիզմի, Բան-Թուրանիզմի, Բան-Թուրքիզմի տեսաբանութիւններով յօդուածներ: Էնվեր անձամբ կը գլխաւորէ թուրք երիտասարդական շարժումը՝ «Պօզգուրտ»-ները: Սուլթան Համիտ յաճախ կը յիշեցնէ, թէ ինք 300 միլիոն իսլամին Խալիֆան՝ կրօնապետն է:

Երբ 1880-ին, Օսմանացիներու պաշտպան հրեայ ծագումով Տիգրաւէլիի (Benjamin D'Israeli) գլխաւորած Պահպանողական Կուսակցութիւնը ընտրութիւնները կը կորսնցնէ ու Կլաստօնի (William E. Gladstone) գլխաւորած Ազատականները գործի գլուխ կուզան ու երբ Անգլիա, 1882-ին, Եգիպտոսը կը գրաւէ, երկու երկիրներու մինչեւ որոշ պաղորթին մը ի յայտ կուգայ: Կիպրոսը ու Եգիպտոսը ի ձեռին, Անգլիոյ համար «Հնդկաստանի Ճամբայ»-ն պաշտպանելու տեսանկիւնէն այլեւս Օսմանեան Կայսրութիւնը իր արժէքը կը կորսնցնէ: Ազատագրուած պալքանեան երկիրներուն զօրավիզ կանգնիլ իր շահերուն աւելի կը յարմարի:

Իր քաղաքական ազդեցութեան դաշտը ընդարձակել փորձող եւ առեւտրական նոր շուկաներ փնտռող Գերմանիա առիթէն օգտուելով Օսմանեան Կայսրութեան մօտեցում ցոյց կուտայ:

Գերմաններու թելադրութեամբ, մահմետական ժողովուրդներու Մէքքէ այցը դիւրացնելու նպատակով եւ բոլոր մահմետականներու նիւթական աջակցութեամբ, կը ձեռնարկուի Հիճազի երկաթուղիին շինութեան: Գերմանական տնտեսական շահերու տեսակէտէն այս երկաթուղիի շինութիւնը չափազանց կարեւոր էր: Վիլհելմ Բ. կայսրը (Kaiser Wilhelm II), 1889-ի Նոյեմբերին, Պոլիս այցելութեան ընթացքին, երկաթուղիին շինութեան մենաշնորհն ալ ձեռք կը ձգէ:

Փարիզի թերթերէն Temps-ի համաձայն բան-ճերմէնիք քարոզիչներէն Dr. Paul Rohrbach, 1913-ին, Պեռլինի մէջ, գերման բարձրաստիճան ղեկավարութեան ուղղեալ դասախօսութեան մը ընթացքին ըսած է, թէ հայերը պէտք է տեղահանուին ու դէպի Միջագետք տարուին ու Պաղտատի երկաթուղիին շուրջ տեղաւորուին, որպէսզի այդ խոպան տեղերը մշակուին եւ երկաթուղիի շինութեան բաժնետէր գերմանացիները կացութենէն օգտուին: Dr. Paul Rohrbach, Վիլհելմ Բ. Կայսրի թուրքերու հետ բարեկամութիւն հաստատելէ յետոյ, Փոքր Ասիոյ ու Միջին Ասիոյ թուրք ցեղերուն մասին ուսումնասիրութիւններ կատարած եւ այն եզրակացութեան յանգած է, որ այս բոլոր թուրք ցեղերը, ի շահ գերմանական ծաւալապաշտ քաղաքականութեան, պէտք է իրարու հետ կապուին, սակայն այդ միացման՝ այդ թուրանի ճամբուն վրայ հայեր կը գտնուին: Ուստի երկրին այս աշխատասէր ու գործունիայ տարրը պէտք է իր հայրենի հողերէն հեռացուի ու փոխադրուի երկաթուղիին շուրջ:

Օսմանեան բանակի արդիականացման, սպայից դպրոցին մէջ գերմանական ռազմավարական գիտութիւնները սորվեցնելու համար բարձրաստիճան գերման սպաներ գործի գլուխ բերուած էին: Իթթիհատական սպաներէն շատեր զօրավար Կոլցի (Colmer von der Goltz) աշակերտած, անկէ գերմանական վարդապետութիւնը լաւ մը սորված էին. հպատակ եւ տկար ազգ մը բռնի աքսորել եւ ոչնչացնել: Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ այս վարդապետութիւնը կը գործադրուէր:

Վիլհելմ Բ. կայսրը, 1898-ին, անգամ մը եւս Պոլիս կուգայ ու զանազան քաղաքներ այցելելով մինչեւ Երուսաղէմ կ'երթայ: Ճամբան՝ Տամասկոս, ալ-Մարժա (al-Marja) հրապարակին վրայ, Սուլթան Սալահետտինի դամբարանին առջեւ, մահմետականները սիրաշահելու համար կը յայտարարէ, թէ ինք Սուլթան Համիտը որպէս Խալիֆա յարգող 300 միլիոն մահմետականին բարեկամն է:



Սահմանադրութեան հռչակման առթիւ եկեղեցոյ մը առջեւ, որպէս «եղբայրութեան» նշան հայ կղերականը եւ իմամը ինչպէս նաեւ զինուորականը միասնաբար նկարուած

Մինչ այդ հայերու ջարդը կը շարունակուի: Տեղացի ժողովուրդը զինելով հայերու վրայ յարձակումի կը դրկուին: Ջարդարարները կամ անպարտ կ'արձակուին եւ կամ չնչին պատիժներու կենթարկուին:

Մեծ յոյսեր ներշնչած Իթթիհատականներու յեղափոխութենէն միջոց մը յետոյ, 14 Ապրիլ 1909-ին, Ատանայի կոտորածը տեղի կ'ունենայ: 30,000 հայ կը ջարդուի: Մերսին քաղաքի նաւահանգիստը խարսխած Անգլիական ու Ֆրանսական նաւատորմի հրամանատարները, 24 Ապրիլին, Ատանա կէրթան ու հարցերէն պատասխանատու նկատուող նահանգային կառավարիչին հետ կը տեսնուին: Երիտթորքերը կամբաստանեն հայերը՝ օտարները Օսմանեան Կառավարութեան ներքին գործերուն միջամուխ ընելով:

Կիլիկիոյ հողը շատ արդիւնաբեր է: Զանազան պտուղներ, ցորեն, գարի, բամպակ, առատօրէն կ'աճին: Կոտորածները կըլլան հունձքի շրջանին: Հունձքը կամ կը թալանուի եւ կամ ալ կը փճացուի, շրջանի տնտեսական վիճակն ալ միասնաբար փճացնելով:

Քննութիւններ կատարելու համար խորհրդարանէն կը դրկուի երկու երեսփոխան՝ մին թուրք, միւսը հայ: Քննիչ յանձնախումբին հայ անդամը՝ Պապիկեան Էֆէնտի, Պոլիս վերադառնալէ յետոյ, իր տեղեկագիրը չներկայացուցած կը մեռնի: Թուրք երեսփոխանի պատրաստած տեղեկագիրը կըլլայ ի նպաստ թուրքերու:

Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարը՝ Stephen Pichon, 17 Մայիս 1909-ին երսփոխանական ժողովին կը տեղեկացնէ, թէ յարձակումներու առաջքը առնելու համար դրկուած զինուորական ջոկատներն ալ 30,000 հայու ջարդին մասնակցած են: Յաջորդ օր, Փարիզի Օսմանեան դեսպանը թերթերու դրկած յօդուածին մէջ կը յայտարարէ, թէ մեռեալներու թիւը միայն 4,000 է:

Մեծ կայսրութիւն մը ըլլալու փափաքը երբեք չէ կորսուած: Այդ տենչանքը միշտ վառ է, բայց Եւրոպայի մէջ կորսնցուած հողերու վերագրաւումը անկարելի է: Հետեւաբար այքերը կը դառնան դէպի արեւելք, դէպի Միջին Ասիա: Զարկ կը տրուի Բան-Թուրանիզմական գաղափարախօսութիւններուն: Թուրան նկատուած երկրին սահմանները պիտի տարածուէին մինչեւ հոն, ուր արդէն թրքերէն լեզուն տարածուած էր:

Թուրանի քարոզիչ Միւնիս Թէքինալի (Մօիզ Գոհէն անունով հրեայ մը), թուրանի իրականացման համար երկու ծրագիր կը ներկայացնէ: Առաջինը իրականացումը աւելի դիւրին «Փոքր Թուրան»-ն է, որուն սահմաններն են արեւմուտքէն՝ Պոլիսը, արեւելքէն՝ Պայգալ Լիճը, հիւսիսէն՝ Միջին Ասիոյ Քազան քաղաքը եւ հարաւէն՝ Մոնկոլիան: «Փոքր Թուրան»-ին պիտի յաջորդէ «Մեծ Թուրան»-ը, ճաբոնէն մինչեւ Սքանտինաւեան լեռները, Հիւսիսային Ովկեանոսէն մինչեւ Թիպեղի բարձրունքները:

Հայերը թուրանի ճամբուն վրայ էին:

Իթթիհատ եւ Թէրաքքի կուսակցութիւնը, 1910-ին, Սելանիկի մէջ կայացած համագումարին կընդունի գաղտնի բանաձեւ մը, ըստ որոյ կայսրութիւնը պէտք է դառնայ գուտ թրքական պետութիւն մը՝ քրիստոնէայ եւ ոչ-թուրք տարրերու ոչնչացման միջոցաւ:

1913-էն 1916 Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպանը՝ Հէնրի Մորկընթաու (Henry Morgenthau), իր յուշերուն մէջ կը գրէ. «Ըստ Երիտթորքերու, եթէ Օսմանեան Կայսրութեան ղեկավարութիւնը իր գրաւած երկիրներու քրիստոնէաները ջարդած ու այդ տեղերը մեծ թիւով թուրքեր տեղաւորած ըլլար Պուլկարիա, Մերպիա, Ռումանիա այսօր ձեռքէ ելած պիտի չըլլար»:

Եւրոպայի Համաձայնական Պետութիւններուն դէմ կայսրութեան մահմետական ժողովուրդներուն միասնականութիւնը ապահովելու նպատակով ալ կը դիմուի Բան-Իսլամիզմի:

Բան-Իսլամիզմը գերման ծաւալապաշտական քաղաքականութեան համար շատ յարմար միջոց մըն էր: Մահմետականներու միասնականութիւնը առիթ պիտի տար, որ Համաձայնական Պետութիւններու գաղթավայրերու մահմետականները անոնց դէմ

ապստամբեին ու պետությունները ապստամբությունները զսպելու համար այդ վայրերը յաւելեալ բանակներ պահէին, տկարացնելով իրենց Եւրոպական բանակներուն ուժը: Գերմանիա, որպէս իսլամներու պաշտպան, Բան-Իսլամիզմէն տնտեսապէս ալ պիտի օգտուէր: Իր արտածումը դէպի այս երկիրներ պիտի աւելնար:

Իթթիհատ վէ Թէրաքքին իրենց գաղափարախօսութիւնը պատրաստող Զիյա Կեօքալփի եւ անոր գաղափարակից ընկերներուն օգնութեամբ կը հաստատէ զանազան թրքական միութիւններ՝ Թիւրք Տէրնէդի, Թիւրք Եուրտու, Թիւրք Օճաղը, որոնց հրատարակած պարբերաթերթերուն մէջ կը քարոզուի թրքացում, մահմետականացում եւ օտարներու խանութներէն առետուր չկատարել:

23 Յունուար 1913-ին Իթթիհատ վէ Թէրաքքի կուսակցութիւնը Պապը Ալին (Բարձր Դուռը) կը պաշարէ ու կառավարութիւնը հրաժարելու կը ստիպէ: Նոյն օրը, կուսակցութեան ենթակայ նոր կառավարութիւն մը կը կազմուի. Մահմութ Շէֆքէթ փաշա՝ Սատրագամ (վարչապետ), Թալաթ՝ ներքին գործոց նախարար:

Երիտթուրքերը մինչեւ այդ թուական ազատութիւն, ժողովուրդներու եղբայրութիւն, հաւասարութիւն, ժողովրդավարութիւն կը քարոզէին՝ Իշխանութեան տիրանալէ յետոյ դարձան սանձարձակ բռնակալներ եւ ջարդարարներ:

1913-ի Ապրիլէն սկսեալ քիւրտ ցեղախումբեր հայերը մեռցնելու, անոնց ունեցածը թալանելու, հողերը գրաւելու չարագործութեան նոր թափ մը կուտան:

Եւրոպայի քաղաքական վիճակը հասած էր աշխարհամարտի մը նախօրեակին: Որեւէ պատճառ կրնար պատերազմի տեղի տալ: Այդպէս ալ կըլլայ: Աւստրահունգարական Կայսրութեան զահաժառանգ Archduke Franz Ferdinand-ին 28 Յունիս 1914-ին, Պոսնիոյ մէջ սերպերու կողմէ սպաննութիւնը կըլլայ դրդապատճառը:



Դեսպան Հէնրի Մորկընթաու



Իթթիհատականներու համար Գերմանացիներու կողքին, Համաձայնականներու դեմ պատերազմի մասնակցիլ հին հաշիւները մաքրելու, տրուած մենաշնորհներէն (Capitulation) եւ իրենց Ֆրանսայի ունեցած պարտքերէն ազատելու լաւագոյն միջոցն էր: Պատերազմը Բան-Թուրանիզմը կամ Բան-Իսլամիզմը իրականացնելու ամենայարմար առիթն էր: Պատերազմը «Հայկական Հարց»-ը վերջնականապէս լուծելու լաւագոյն պատեհութիւնն էր:

Թէեւ հայեր Օսմանեան Կայսրութեան բնակչութեան միայն 10 տոկոսը կը կազմէին, սակայն ներածման 60 առ հարիւրը, արտածման 40 առ հարիւրը եւ ներքին առեւտուրի ալ 80 առ հարիւրը իրենց ձառքն էր: Ջարդերու ընթացքին Ամերիկեան դեսպանը՝ Հէնրի Մորկընթաու Թալաթի հետ տեսակցութեան մը ընթացքին կըսէ. «Եթէ մարդասիրական նկատումներ չունիս, մտածէ ձեր նիւթական կորուստին մասին: Այս մարդիկը ձեր առեւտրականներն են, ձեր ճարտարարուեստին մեծագոյն մասը անոնց ձեռքն է: Անոնք ամենաբարձր տուրքերը կը վճարեն: Առանց անոնց ձեր տնտեսական վիճակը ի՞նչ պիտի ըլլայ»: Թալաթի պատասխանը կըլլայ. «Մենք տնտեսական կորուստի կարելորութիւն չենք տար, հաշուած ենք եւ գիտենք, թէ այդ կորուստը հինգ միլիոն բաւոնտը պիտի չանցնի: Ատոր ալ կարելորութիւն չենք տար»:

Էնվեր, որ Սուլթան Ռէշատի եղբոր՝ իշխան Սիւլէյմանի աղջկան՝ իշխանուհի Նաճիյէի հետ ամուսնացած ու փաշայի աստիճանի բարձրացուած էր, 3 Յունուար 1914-ին, ինքզինքը կը պարտադրէ ու կը ստանայ Պատերազմական Նախարարի եւ նաեւ փոխ ընդհանուր հրամանատարի պաշտօնները, Սուլթանը մնալով ընդհանուր հրամանատար: Ան, Պատերազմական Նախարար ըլլալէ առաջ, գաղտնի միութիւն մը կազմած էր, որ իր նախարարութեան շրջանին կոչուեցաւ Թէշքիլաթը Մահսուսա: Այս կազմակերպութիւնը մնաց շատ գաղտնի, միայն քիչերու յայտնի էր միայն Էնվերին հաշուետու: Կազմակերպութեան նիւթականը կը հայթայթուէր Պատերազմական Նախարարութեան ծածուկ յատկացումներէն եւ գերմանական զինուորական օգնութիւններէն: Կազմակերպութեան մաս կը կազմէին բժիշկներ, երկրաչափեր, լրագրողներ, կուսակցականներ, նախկին փորձառու զինուորականներ, ոճրագործական յանցանքով բանտարկուածներ, աւազակներ, Ռումելիէն եկած գաղթականներ: Հայերու դեմ դուրս պատրաստել ու Համաձայնականներու գաղթավայրերու մահմետականները ապստամբութեան պատրաստել Թէշքիլաթը Մահսուսա-ին պարտականութիւնն էր:

Էնվեր փաշա կրակոտ, արկածախնդիր բնաւորութեամբ, այդ շրջանին 33 տարու անձ մըն էր, իսկ 40 տարու Թալաթը աւելի լուրջ էր ու խոհեմ: Օսմանեան Կայսրութեան եւ յատկապէս հայերուն ապագան այս անձերուն ձեռքն էր:

Էնվեր, 1909-ին, Պեռլինի մէջ Օսմանեան Կայսրութեան զինուորական ներկայացուցչութեան շրջանին Վիլիէլմ Բ. Կայսրի բարեկամութիւնը վաստկած էր: Գերմանացիներու հանդէպ մեծ համակրանք ունէր: Անոնց զինուորական կարգապահութեան եւ կազմակերպութեան շատ կը հիանար: Թալաթի ու Սատրազամ Սաիթ Հալիմ փաշայի գիտութեամբ, Գերմաններու հետ գաղտնապէս համաձայնելով, առանց երեսփոխանական ժողովի գիտակցութեան, Օսմանեան Կայսրութիւնը Գերմաններու կողքին պատերազմին մասնակից կը դարձնէ:

1914-ի Փետրուարի 8-ին, Մեծ Վեզիր Սաիթ Հալիմ փաշայի ու Ռուսաստանի Պոլտոյ դեսպան Գուլկելիչի եւ միւս դեսպաններու ալ մասնակցութեամբ կը ստորագրուի բարեկարգումներու ծրագիր մը: Գերմանիա կը մերժէ ստորագրել այս համաձայնութիւնը, ըստ որոյ հայկական վեց վիլայէթներուն պիտի կցուէր Տրապիզոնի նահանգը ու այս ամբողջ շրջանը պիտի բաժնուէր երկու ընդհանուր քննիչութեան՝ մարզպանութեան: Առաջին շրջանը պիտի պարփակէր Կարին (Էրզուրում), Տիրապիզոն եւ Սեբաստիա (Սիվաս) նահանգները, իսկ երկրորդը՝ Վան, Բիթլիս, Խարբերդ (Էլազիզ) եւ Տիգրանակերտ (Տիարպազըր) նահանգները: Մարզերու ընդհանուր քննիչները պիտի ըլլային Երոպացիներ, որոնց նշանակումը պիտի կատարէր Սուլթանը, մեծ պետութիւններու առաջարկած

թեկնածուներին: Ընդհանուր քննիչը իրեն ենթակայ պաշտօնեաները նշանակելու, պաշտօնազրկելու եւ դատի տալու իրաւունք պիտի ունենար: Հողային վեճերը պիտի լուծուէին քննիչի անմիջական հսկողութեամբ: Օրէնքները ու կառավարական հաղորդագրութիւնները պիտի հրատարակուէին տեղական լեզուներով: Ազգաբնակչութիւնը պիտի կարենար գործածել իր լեզուն՝ վարչութեան ու դատարանի մէջ: Իւրաքանչիւր ազգ կրթական գործի համար պետական պիւթճէէն պիտի ստանար որոշ գումար՝ համեմատ իր վճարած տուրքին, նաեւ իրաւունք պիտի ունենար նոյն նպատակի համար նշանակել ազգային տուրք: Այր մարդիկ իրենց զինուորական ծառայութիւնը պիտի կատարէին իրենց բնակչութեան շրջանին մէջ: Համիտիէի Ջոկատները պիտի ջնջուէին:

Նոյն դրութիւնը կը գործադրուէր Լիբանանի մէջ: Հոն ընդհանուր քննիչը օսմանացի մըն էր, հայոց պարագային՝ Եւրոպացի մը պիտի ըլլար: Հայեր հողատարածքին երկուքի բաժանումէն շատ գոհ չէին մնացած: Ռուս դեսպանին տեղեկատուութենէն ի յայտ կուգայ, թէ նոյնիսկ այսքանը Բարձր Դրան (Պապ-ը Ալի) ընդունիլ տալ դժուար եղած էր:

Ներկայացուած թեկնածուներու ցանկէն ընդհանուր քննիչ կընտրուին Արեւելեան Հնդկաստանի կառավարիչ հոլանտացի Վեստենէնկը (Westenenk) եւ նորվեկիոյ բանակի հազարապետներէն Հօֆ (Hoff) եւ 23 Մայիս 1914-ին, անոնց հետ տասնական տարուայ պայմանագրեր կը ստորագրուին: Hoff կը մեկնի իր պաշտօնատեղին Վան, ուր թուրք իշխանութիւնները թշնամանքով կընդունին զինք եւ թուրք պաշտօնեաներ կընդիմանան իրեն ենթարկուելու:

Օսմանեան Կայսրութեան Եւրոպական հողատարածքը պզտիկցած էր: Արեւմտեան սահմանները հիմայ Ատրիանապոլսէն (Էտիքնէ) կը սկսէր: Արեւելքն ալ կէրթար: Թուրանի ճամբան կը գոցուէր: Հայերը ներքին թշնամին էին: Պէտք է ոչնչացուէին ու անոնց հարստութեան տիրացուէր:

1914-ի Օգոստոսի 2-14 թուականներուն Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Կարին (Էրզուրում) գումարած իր 8-րդ պատգամաւորական ժողովին բարեկարգութիւններու ծրագիրը անբաւարար կը նկատէ ու օգտակար չի գտներ, բայց կառավարութեան կողմէ ծրագրի իրականացման դէմ հանուած դժուարութիւններու դէմ պայքարելու որոշումը կառնէ:

Իթթիհատ վէ Թէրաքքի կուսակցութիւնը Տօքթ. Պահաթթին Շագիրի եւ Նաճի Պէյի գլխաւորութեամբ Հ.Յ.Դ.-ի ժողովին պատուիրակութիւն մը կը ղրկէ, Արեւելահայաստանի (Ռուսաստանի) հայերը Ռուսիոյ դէմ ապստամբեցնելու, գրաւուած հողերու վրայ ինքնավար մարզ մը հաստատելու, կովկասեան թուրքերը Փոքր Ասիա եւ թրքահայերն ալ Կովկաս տեղափոխելու առաջարկով: Առաջարկը կը մերժուի այն բացատրութեամբ, թէ թրքահայերը Օսմանեան Կայսրութեան հաւատարիմ հպատակներն են, պատերազմի ընթացքին բանակի մէջ թշնամիին դէմ պիտի կռուին եւ օտար երկրի մը մէջ գործունէութիւն ցոյց չեն կրնար տալ: Տօքթ. Պահաթթին Շագիր այս բացատրութիւնը դաւաճանութիւն կը նկատէ եւ կըսէ, թէ այս որոշումով հայերը Ռուսաստանի հետ կողմնորոշուած կըլլան եւ Օսմանեան Կայսրութիւնը պաշտպանելէ հրաժարած:

Պատերազմի նախօրեակին Երիտթուրքերու կեդրոնական կոմիտէի անդամ Էօմէր Նաճի Պէյն ալ օսմանեան երեսփոխան Վահան Փափագեանին կըսէ, թէ հայերու Ռուսաստանի նկատմամբ չեզոքութիւնը բաւարար չէ, ընդհակառակը հայերը ռուսերու դէմ պայքարելու համար կամաւորական խումբեր պէտք է կազմեն ու նիւթական մեծ օժանդակութիւններ ընեն:

Գերմանիա 1914-ի Օգոստոսի 1-ին Ռուսիոյ դէմ, Օգոստոսի 3-ին ալ Ֆրանսայի դէմ պատերազմ կը հռչակէ: Օգոստոսի 4-ի գիշերն ալ Անգլիա Գերմանիոյ դէմ պատերազմ կը յայտարարէ:

Առաջին Աշխարհամարտը սկսած էր: Երիտթուրքերու՝ Իթթիհատ վէ Թէրաքքի կուսակցութեան սպասած օրը հասած էր: 6 Սեպտեմբերին կայսրութեան հայաշատ քաղաքներու կառավարիչներուն հեռագիրներ կը ղրկուի պահանջելով հայ կուսակցութիւններու՝ Դաշնակ եւ Հնչակ ու երեւելի ազգայիններու շարժումները հսկողութեան տակ առնել:

11 Նոյեմբերին Օսմանեան Կայսրութիւնը պաշտօնապէս Ա. Աշխարհամարտին կը մասնակցի Համաձայնականներու դէմ, Գերմանիոյ կողքին պատերազմելով:

Հին փառաւոր օրերու վերահաստատման ցանկութեամբ ապրող երիտօրութիւնը երազը այլեւս պիտի իրականանար: Ահա՛, Զիյա Կեօքալփի բանաստեղծութիւններէն երկու տող.

Քօշ, Փլեւնէ յինէ ալ պայրագ թագարն  
Կէճէ կիւնտիւզ Թունա սույու քան արսըն

(Վազէ, թող Փլեւնէի վրայ դարձեալ կարմիր դրօշակ ծածանի, Տանուպի ջուրը գիշեր ցորէկ արիւն վազէ):

13 Նոյեմբերին, Սուլթանը, Թօքթաբը Պալատին Մարգարէ Մուհամմէտի հագուստները պահուած սենեակին մէջ ճիւղատ (սրբազան պատերազմ) յայտարարող Տէթվա-ն կը կարդայ: Աշխարհի բոլոր մահմետականները Խալիֆային (մահմետականներու կրօնապետը-Մուհամմէտի ներկայացուցիչը) դէմ պատերազմի ելած քրիստոնէաներուն դէմ պատերազմելու կը հրաւիրէ:

16 Դեկտեմբերին, 8 Փետրուարին ստորագրուած, բարեկարգումներու համաձայնութիւնը չեղեալ կը յայտարարուի: 31 Դեկտեմբերին, հաղորդագրութեամբ մը, նահանգային քննիչներուն պաշտօններուն վերջ կը տրուի: Բարեկարգումները անմիջապէս կը դադրեցուին: Ընդհանուր քննիչներէն Հօֆ (Hoff) Վանէն կը հեռանայ: Վեստենէնկ (Westenenk) այդ օրերուն տակաւին իր պաշտօնատեղին՝ Կարին (Էրզուրում) իսկ չէր հասած:

Թէշքիլաթը Մահսուսան, Միջին Ասիոյ մահմետական ցեղերը Ռուսիոյ դէմ ապստամբեցնելու, խափանարարութիւններ կազմակերպելու, անկախ Հայաստանի մը կազմութեան Ռուս-Հայկական ծրագիրը ձախողեցնելու նպատակով, 2,000 անձերէ բաղկացեալ աւազակախումբ մը Տօքթ. Պահաթթին Շաքիրի գլխաւորութեամբ եւ ընկերակցութեամբ բնիկ Պուլսեցի, զինուորական (Քուլէլի Ասքերի Մէքթեպի) եւ Պատերազմական (Հարպիյէ) վարժարանները աւարտած, իր արկածախնդրութիւններով նշանաւոր սպայի մը՝ Եագուր Ճէմիլ Պէյի, Կովկաս կը դրկէ: Երբ Իթթիհատականները 23 Յունուար 1913-ին Պապը Ալի-ն պաշարած ու ներս խուժած էին. Եագուր Ճէմիլ Պէյ օրուայ Պատերազմական Նախարար Նազըմ Փաշան տեղւոյն վրայ գնդակահարած էր:

Տօքթ. Պահաթթին Շաքիր իր առաքելութենէն չափազանց խանդավառ, Կ. Պուլսէն մինչեւ Կարին (Էրզուրում), ճամբու խաչմերուկներուն «Թուրանին ճամբան ասկէ կանցնի» գրութեամբ ցուցատախտակներ դնել կուտայ:

Թէշքիլաթը Մահսուսան, հրոսակներու ուրիշ խումբ մըն ալ, Մակեդոնիոյ մէջ Իթթիհատ վէ Թերաքքի հիմնադիրներէ միուն՝ Էօմէր Նաճի Պէյի գլխաւորութեամբ դարձեալ Կովկաս կը դրկէ, դէպի Հնդկաստան երթալու նպատակով:

Պատերազմական փորձառութենէ զուրկ, նաբոլիոնական մեծամտութիւններու տէր Էնվէր փաշա, 9 (22) Դեկտեմբեր 1914-ին, թուրանի դռները բանալու նպատակով Կովկասեան ճակատի վրայ, յոգնած բանակին զինամթերքի ու պարենաւորման անբաւարարութիւնը առանց նկատի առնելու յարձակման կանցնի: 14 (27) Դեկտեմբերին Ռուսական բանակը, որու շարքերուն մէջ հայ կամաւորներ ալ կային, որը թուրքերուն չափազանց զայրոյթ պատճառած է, Օսմանեան բանակի յառաջացումը կը կեցնէ ու կանցնի յարձակումի: Մարըքամըշ կըլլայ Օսմանեան 3-րդ զօրաբաժնին գերեզմանը: 110,000 զինուորէն միայն 15,000-ը ողջ կը մնայ, 12,000-ն ալ գերի կ'իյնայ: Էնվէր, շնորհիւ Յովհաննէս Չավուշի մը, ստոյք մահէ կ'ազատի: 7(20) Յունուար 1915-ին Պուլիս կը վերադառնայ: Ճամբու տեւողութեան իր հայ զինուորներուն քաջութիւններուն եւ Յովհաննէս Չավուշի մասին կը պատմէ: Էնվէրին

այս արտայայտությունները գերմանական «Osmanischen Lloyd» թերթին 13 (26) Յունուար 1915 թիվին մեջ կը հրատարակուին: Պատերազմի հետեւանք 70,000 հայ ստիպողաբար Երեւան ու Թիֆլիս կը գաղթէ:

Թէեւ բանակը Էնվերի մեծամտութեան պատճառով հայկական բարձրաստիճանի վրայ կը ջարդուի ու այս աղէտալի արկածախնդրութիւնը Իթթիհատին «թուրան»-ի երազին հարուած մը կուտայ, սակայն այս պարտութիւնը իրենց համար անընդունելի է: «Հայերը օսմանեան բանակը կոնակէն դաշունահարեցին» կարգախօսը ամենուր լսելի կը դառնայ: «Պատերազմի սկզբնատրութեան հայեր բանակէն փախան, հայդուկախումբեր կազմեցին, լեռ բարձրացան ու բանակի ապահովութիւնը վտանգեցին» կարգախօսն ալ տեղահանութեան, աքսորի ու ջարդի համար որպէս արդարացուցիչ պատճառ կը գործածուի:

Օսմանեան բանակի ընդհանուր հրամանատար Լիման վօն Սանտերս (Liman von Sanders) իր յուշերուն մեջ գրած է, թէ բանակէն փախուստ տալ շատ բնական երեւոյթ մըն էր եւ այդ օրերուն մօտաւորապէս 300,000 փախստական օսմանցի զինուոր կար:

Թէշքիլաթը Մահսուսա եւ Համիտիէյի ջոկատները փախստական փնտռելու, պատերազմական տուրք գանձելու պատրուակներով գիւղերը կը խուզարկեն, թալանի կուտան, գիւղացիները կը մեռցնեն:

1915-ի Փետրուարին տրուած հրամանով կը հաւաքուի հայ զինուորներուն զէնքերը, անոնցմով կը կազմուին ծանր աշխատանքի ջոկատներ (ամելէ թապուրու): Անոնք, զանազան վայրեր իրենց տրուած գործերը կատարելէ ու իրենց գերեզմանները փորելէ յետոյ, կը գնդակահարուին:



Հայոց տուներու «խուզարկութիւն»ներու ընթացքին «գտնուած» զէնքեր: Նման նկարներ կը գործածուին ցոյց տալու, թէ հայեր ապստամբութեան կը պատրաստուէին:

Նոյն թուականներուն, առանց պատճառաբանութեան, պետական պաշտօնեայ հայերուն գործերուն վերջ կը տրուի եւ հայերու կայսրութեան սահմաններուն մեջ ճամբորդելու եւ թղթակցելու ազատութիւնը կը կաշկանդուի, կարգիլուի: Թէշքիլաթը Մահսուսայի միջոցաւ հայերու զէնքերը կը հաւաքուի: Անոնք, պահուած զէնք փնտռելու պատրուակով կը կողոպտեն եկեղեցիները, կը սրբապղծեն

խորանները, կը ծեծեն կղերականները, կիները, նոյն իսկ յղիները եւ զանոնք կը բռնաբարեն: Ամերիկեան դեսպան Հէնրի Մորկընթաու իր յուշերուն մէջ գրած է, թէ Վանի կուսակալ Ճեվտէթ չարչարանքի մասնագետ կոչուած է հայոց ոտքերուն պայտ գամելով:

1908-ի սահմանադրութեամբ հայեր ալ զենք ունենալու իրաւունքին տիրացած էին: Տեղահանումի, արքայի նախօրեակին հայկական համայնքներէն կը պահանջուի յանձնել որոշ թիւով զենք, որ առ հասարակ այդ համայնքին ունեցած զենքի թիւէն շատ բարձր է: Երբ յանձնուած զենքերու թիւը պահանջուած քանակութեան չի համապատասխաներ, այդ մարդիկ կը բանտարկուին ու չարչարանքներու կենթարկուին: Նման կացութիւններու չենթարկուելու համար շատեր իրենց թուրք դրացիներէն բարձր գիներով զենք կը գնեն ու իշխանութիւններուն կը յանձնեն: Պատասխանատուներ հաւաքուած զենքերը կը նկարեն եւ կը յայտարարեն, թէ հայեր ապստամբութեան կը պատրաստուէին:

Դարձեալ Փետրուարին Թէշքիլաթը Մահուսային խումբերը Սեբաստիոյ մէջ 300 ընտանիքէ բաղկացեալ գիւղի մը վրայ կը յարձակին եւ կիները կը բռնաբարեն: Երբ այդ մարդիկ իրենց կիները կը պաշտպանեն, թուրքերը այս պաշտպանութիւնը ապստամբութիւն կը կոչեն:

6 Ապրիլին, Սեբաստիոյ Թէշքիլաթը Մահուսայի ղեկավարին Պոլիս դրկած տեղեկութեան համաձայն, քաղաքին մէջ 30,000 զինեալ հայ կամաւորներ կային: Անոնցմէ 15,000 արդէն իսկ Ռուսիա մեկնած էր եւ մնացեալ 15,000 ալ Օսմանեան բանակը ետեւէն զարնելու համար հրամանի կը սպասէր: Քաղաքի կառավարիչը՝ Ահմէթ Մուամմէր ալ, Ապրիլի 22-ին, նման տեղեկագիր մը կը դրկէ Ներքին Նախարարութեան:

Օսմանեան 3-րդ բանակի 10-րդ զօրաբաժինը Սեբաստիա կը գտնուէր: Անոնց ներկայութեան 30,000 մարդ ի նչպէս կարելի էր զինել, մարզել ու պահել: 15,000 զինեալ մարդ ի նչպէս Սեբաստիայէն մինչեւ Ռուսական սահման կերթար, առանց նշմարուելու:

Նման տեղեկատուութիւններ կանխամտածուած տեղահանութեան ու ջարդի համար կանխապատրաստուած պատճառաբանութիւններ էին:

Տեղահանումը, արքայը կը սկսի Ձէյթունէն: Օսմանացիները 1517-ին Կիլիկիոյ շրջանը գրաւելէ յետոյ Ձէյթուն եղած է կիսանկախ եւ ղեկավարուած չորս իշխանական տուներու կողմէ, վճարելով որոշ քանակութեամբ տուրք: Տուրքերը բարձրացնելու եւ յատկապէս կիսանկախ վիճակին վերջ տալու նպատակով Օսմանեան բանակը, 1780-էն մինչեւ 1895, 41 անգամ յարձակած է Ձէյթունի վրայ, բայց միշտ պարտուած: 1914-ի Դեկտեմբերին, զօրաշարժի պատրուակով, հրաման կը տրուի զենքերը յանձնել: Կիլիկիոյ Մահակ Կաթողիկոսը, կառավարութեան «Փոքր շարժում մը կրնայ վտանգել Թուրքիոյ նահանգներուն ամբողջ հայութիւնը» սպառնալիքին անսալով, ժողովուրդը կը յորդորէ զենքերը յանձնել ու զինուորագրուիլ: Մարաշէն եկած պատուելի մըն ալ նոյն յորդորը կուտայ: Աքսորականներու առաջին խումբը 26 Մարտ (8 Ապրիլ)-ին ճամբայ կը հանուի:

Էնվերի աներձագ Ճեվտէթի Վան քաղաքի կառավարչութեան շրջանին, 1915-ի Ապրիլի 7(20)-ի օրը, թուրք զինուորներ հայ կիներու վրայ կը կրակեն: Վան, Արեւմտեան Հայաստանի մեծագոյն քաղաքը, Վասպուրականի մայրաքաղաքը, ունէր իրարմէ 5-6 քիլոմէթր հեռաւորութեամբ հայկական երկու մաս՝ Այգեստանը, ուր կը բնակէին 20,000 հայեր եւ Քաղաքամէջը՝ 3,000 հայ բնակչութեամբ: Այդ երկու մասերուն միջեւ կը բնակէին 18,000 թուրքեր: Մարըքամըշի պատերազմին հետեւանք շրջակայ գաւառներէն Վան ապաստանած էին 70,000 հայեր: Ճեվտէթ, 1906-էն ի վեր Ռուսերուն գրաւած Իրանեան Ազերպեյճեանի Մալմաս քաղաքի հայերն ու նեստորականները ջարդելէ յետոյ Վան վերադարձին, 2 (15) Ապրիլին, 500 երիտասարդներ գնդակահարել կուտայ ու յարձակումի անցնելու համար խրամներ կը փորուին: Հայերն ալ կը պատրաստուին ինքնապաշտպանութեան: Կը փորուին խրամներ: Կը կազմուի ինքնապաշտպանութեան զինուորական մարմին, պարենաւորման ու բաշխման ցանց, զինագործական արհեստանոց: Ապրիլի 7(20)-



ին կը սկսի թրքական կրակը եւ հայկական թաղերու վրայ յարձակումները: Կը պաշարուի Այգեստանը: Յարձակումի կենթարկուի նաեւ Քաղաքամէջը: Ամիս մը տեւող այս հերոսական գոյամարտին հայեր կը դիմադրեն թրքական գերագանց ուժերուն, ցոյց տալով բացառիկ միասնականութիւն ու քաջագործութիւն: Մինչ այդ Վանի նահանգներուն մէջ հայեր կը ջարդուին: Երբ Մայիսի 6(19)-ին ռուս բանակը ու հայկական կամաւորական ջոկատները Վան կը մօտենան, թուրքերը վերջ կուտան Վանի պաշարման ու կը հեռանան: Ռուս բանակը Վան նահանգի մէջ անթաղ 55,000 դիակ կը հրկիզէ: Քարոզիչներու վկայութեան համաձայն ընդհարումները կըլլան ոչ թէ հայերու դաւաճանութեան, այլ ինքնապաշտպանութեան պատճառով: Ամերիկացի քարոզիչ Տօքթ. Գլարես Ըշըրի (Dr. Clarence Ussher) համաձայն ճենվտէթ վճռած էր հայերը բնաջնջել:

Ապրիլի 19-ին Անատոլուի եւ 24-ին ալ Պոլսոյ մէջ ղեկավար, մտաւորական եւ կղերական դասակարգի ձերբակալումովը, աքսորովը ու սպանութեամբը ջարդերէ առաջ ժողովուրդը առանց ղեկավարութեան կը ձգուի:

Յեղասպանութիւնը հնարաւոր է միայն բռնատիրական վարչակարգ ունեցող երկիրներու մէջ, ուր տիրապետող ազգը ինքզինք գերադաս կը նկատէ իր հպատակներէն ու կը մտադրէ միատարր երկիր մը ստեղծել: Օսմանեան Կայսրութեան մէջ այդ օրերու կացութիւնն ալ այդ էր:

Թէեւ ձերբակալումները, տեղահանութիւնները եւ աքսորը Ապրիլին կը սկսին, սակայն նախարարաց խորհուրդը այսպիսի որոշում մը 1915-ի Մայիսի 14 (27)-ին կընդունի եւ Մայիսի 20-ին (Յունիսի 1-ին) պաշտօնաթերթ Թաքվիմի Վեքայիով (Takvim-i Vekayi) կը յայտարարէ: Բանակի բոլոր բաժիններուն հրահանգ կը տրուի զէնքի ուժով պատժել բոլոր անոնք, որոնք կը հակառակին տեղահանման օրէնքին կատարման, կառավարութեան հրամաններուն ու միջոցառումներուն: Օրէնքի գործադրութեան պատասխանատուութիւնը կը տրուի պատերազմական նախարար Էնվերին:

Հայոց տեղահանութեան ու աքսորին Օսմանեան բանակն ալ կը մասնակցի: Այս մասնակցութիւնը օրինականացնելու համար Սեպտեմբերի 15-ին յատուկ օրէնք կը քուէարկուի:


Հայերու կարգիլուի իրենց կալուածները ծախել: Հայերու կալուածներն ու ապրանքները գնող մահմետականներուն մահապատիժ կը տնօրինուի:

3-րդ զօրաբանակի հրամանատարութիւնը հետեւեալ հրամանը կ'արձակէ. «Հայ մը պաշտպանող մահմետականներ իրենց տան առջեւ պիտի կախուին, իրենց տունը պիտի հրկիզուի. իսկ եթէ պաշտօնէյ են գործէ պիտի հանուին ու զինուորական ատեանին պիտի յանձնուին»:

Յունիսի 6-ին Համաձայնական Պետութիւնները Օսմանեան կայսրութեան յուշագիր (memorandum) մը կը յանձնեն, ուր կ'ըսուի. «Հայեր բնաջինջ կըլլան եւ թուրքերու մարդկութեան ու քաղաքակրթութեան դէմ գործած այս ոճրագործութեան պատճառով թէ՛ կառավարութեան անձնակազմը եւ թէ՛ բոլոր այն անձերը, որոնք այս ջարդերուն մասնակցած են կամ պիտի մասնակցին, անհատապէս պատասխանատու պիտի նկատուին»:

Կառավարութիւնը, առ ի պատասխան այս յուշագրին, Եւրոպայի իր դեսպաններուն հետեւեալ տեղեկութիւնը կը դրկէ. «Կարին, Թերճան, Էկին, Սասուն, Պիթլիս, Մուշ եւ Կիլիկիա բնակող հայերուն հանդէպ որեւէ նախագուշական միջոցառումներ չեն եղած, որովհետեւ անոնք երկրին ապահովութեան հակառակ գործունէութիւն մը ցոյց չեն տուած: Համաձայնական Պետութիւններուն մեղադրանքները սուտ են»:

Նախ այր մարդիկ կ'աքսորուին. առաջին հերթին 20-45, ապա 15-20, յետոյ ալ 45-60 տարեկանները: Անմարդաբնակ վայրերու մէջ 50-ական, 100-ական խումբերով, փամփուշտի խնայողութեան պատճառով, կացինով եւ դանակով կը ջարդուին: Էնկիւրիի (Ankara) այրերը քաղաքէն դուրս, բահով, կացինով, սողցով կը կտրեն ու ձոր կը նետեն: Տրապիզոնի (Տրապեզունդ-Trabizon) այրերը նաւակերու մէջ կը սպաննեն ու ծով կը թափեն: Կիները եւ ծերերը ծով կը թափուին ու խեղդամահ կըլլան: Քաղաքի հիւանդանոցի տնօրէնը որբերը կը թունաւորէ: Երզնկայի (Երեզ, Երիզաւան, Արզնկա-Erzincan) եւ Կամախի բնակչութիւնը կ'ոչնչացնեն Կամախի կիրճերուն մէջ: Կուտակուած դիակներու հետեւանքով Եփրատ իր հունը կը փոխէ: Հոն ուր կարելի չըլլար այրերը կանխաւ քսորել, ճամբան, սա կամ նա ձեւով զանոնք խումբերէն կը հեռացուին եւ կը ջարդուին: Ջարդերուն կը մասնակցին Թէշքիլաթը Մահուսայի խումբերը, քիւրտերը, նոյնիսկ քիւրտ կիները, շրջանի ժողովուրդը եւ քսորականներուն իբրեւ պաշտպան տրուած ժանտարմաները:



Սպաննուած բժիշկներ

Աքսորեալներուն մէկ մասն ալ անօթութեան, ծարաւի, յոգնութեան, տառապանքի, վարակիչ հիւանդութիւններու հետեւանքով ճամբան կը մեռնին: Ողջերը կը հասնին Հալէպ: Հոն ոմանք կը փախչին ու արապներու մօտ ապաստան կը գտնեն: Մնացեալները կը դրկուին աւելի հարաւ, Տեր-Չօրի (Der-el-Zor) անապատը, որպէսզի կիզիչ արեւուն տակ ոչնչանան:

Տօքթ. Պահաթթին Շաքիր եւ Տօքթ. Նազիմ, Իթթիհատ եւ Թերաքքիի այս կարկառուն դէմքերը, որոնք Կ. Պոլսոյ Բժշկական Համալսարանի դասախօսներ էին, թոյլատրած են, որ բանակի մէջ ծայր տուած բիծաւոր դիֆոյի դէմ մանրէաբան բժիշկներուն պատրաստած պատուաստի մահաբեր փորձերը կատարուին աքսորականներուն վրայ: Առողջապահական Տնօրէնութիւնը նախապէս արտօնած էր որ սրկումերը կատարուէին մահապարտներու վրայ: Այս գիտական ոճրագործութիւններու մասին գրութիւն ելած է «Թիւրքձէ Իսթանպուլ» թերթին 23 Դեկտեմբեր 1918 թիւին մէջ: Սպաննուած են նաեւ հայ բժիշկներ, թիւով 221, որոնք ջանացած են տառապողներուն օգտակար ըլլալ: Յաւալին այն է, թէ 1838-ին, հայ բժիշկները Սուլթան Մահմուտը համոզած են Կ. Պոլիս Բժշկական Համալսարան բանալու:

Աքսորի սկզբնաւորութեան անոնք, որոնք ճնշումի տակ կիսլամանան, աքսորի չեն դրկուիր: Երբ կրօնափոխներու թիւը նախատեսուածը կանցնի, անոնք ալ կ'աքսորուին:

Անատոլու պաշտօնավարող ամերիկեան հիւպատոսներու, գերման զինուորներու, բողոքական կրօնաւորներու, օտարազգի բուժքոյրերու, լրագրողներու, ջարդէն ազատած անձերու տուած տեղեկութիւններու համաձայն, աքսորը եւ ջարդը կանխապատրաստուած էր, ճամբաները ոչ մէկ օգնութիւն կար, յարձակումներու դէմ պաշտպանութիւն չկար, աքսորականներու ճամբան մօտակայ քիւրտերուն նախապէս տեղեկացուած էր:

Իսլամական օրէնքին համաձայն յանցանք մը անհատին պատասխանատուութիւնն է եւ կարելի չէ այդ յանցանքին համար յանցապարտին պարագաներն ալ պատժել:

Berliner Tageblatt թերթի թղթակցին «Ենթադրենք թէ մի քանի հայեր ձեզի դէմ դաւաճանեցին, ասիկա պատճառ է՞ որ դուք ամբողջ ցեղ մը կ'ոչնչացնէք» հարցումին Թալաթի պատասխանը կ'ըլլայ. «Մենք կը մեղադրուինք յանցաւորին եւ անմեղին միջեւ խտրութիւն չդնելով: Բայց զանազանել անկարելի է, այսօրուայ անմեղը վաղուայ յանցապարտը կրնայ ըլլալ»:

Կեսարիոյ Թալաս գիւղաքաղաքի ամերիկացի քարոզիչը՝ Genevieve Duval Irwin-ի տուած տեղեկութեան համաձայն, ջարդերէն տարի մը առաջ գերման սպայ մը, Սեբաստիոյ մէջ, իրեն ըսած է, թէ 1915-ին հայերուն սոսկալի բան մը պիտի պատահի, զոր երեւակայել իսկ կարելի չէ: Ուրիշ քարոզիչ մը՝ Miss Mary L. Graffam ալ գրած է, թէ գերման սպայ մը յառաջիկայ ամառ պատահելիք դէպքերու առընչութեամբ զինքը զգուշացուցած էր, որով իր եզրակացութիւնը այն է թէ տեղահանումները կանխաւ ծրագրուած էին:





Զաւէն Տէր-Եղիաեան Պատրիարք

Կ. Պոլսոյ Պատրիարք Յովհաննէս Արշարունի (1911-1913), Գեորգ Ե. Սուրենեան Կաթողիկոսին ղրկած 4 Մեպտեմբեր 1912 թուակիր նամակին մէջ, ի մէջ այլոց, կը գրէ, թէ իշխանութիւնը «դեռ ծարաւը ունին իր երբեմնի կոտորածներուն եւ աւարները շարունակելու եւ կը սպառնայ սպառսպում չքացնել հայ ժողովուրդը», իսկ 24 Մայիս 1913 թուակիրին մէջ ալ «...բնագաւառի հայ ժողովրդեան վիճակը հետզհետէ կը վատթարանայ եւ հայկական ընդհանուր կոտորածի մը վերահաս վտանգին տակ կը գտնուի...» կը գրէ: Զաւէն Պատրիարք Տէր-Եղիաեանն (1913-1922) ալ Ամերիկահայոց Առաջնորդ Արսէն Ծ. Վրդ. Վեհունիին ղրկած 28 Դեկտեմբեր 1915 թուակիր նամակին մէջ կը գրէ, թէ. «...որովհետեւ հայերը օրէնքէ դուրս եւ իսլամի թշնամի յայտարարուեցան եւ անոնց կեանքը, պատիւը եւ ինչքը «հելլալ» նկատուեցաւ, սպանութիւնը, բռնաբարութիւնը եւ կողոպուտը կրօնական պարտականութեան վերածուեցաւ, նոյնիսկ պաշտօնական անձերու համար»: Ան կը շարունակէ գրել. «...հայութեան բնաջնջման այս ծրագիրը, որ վաղուց յղացուած էր, գործադրուեցաւ՝ պատրուակ բռնելով Վանի դէպքերը, Կովկասի սահմանազխումն հայերու շարժումները եւ ներքին գաւառներու մէջ հայերու ապստամբելու մտադրութիւնը»:

17 Յունիս 1915-ին, Գերմանիոյ Պոլսոյ դեսպան Վանկենհայմ (Hans von Wangenheim), վարչապետ Theobald von Bethmann-Hallweg-ին կը տեղեկացնէ, թէ Թալաթ, պատերազմական վիճակէն օգտուելով, հայ ժողովուրդը բնաջնջելու նպատակ ունի: Frankfurter Zeitung թերթին 30 տարուայ թղթակից եւ դեսպան Վանկենհայմին խորհրդատու Paul Weitz-ի համաձայն գերմանները հայկական ջարդերուն միջամտութիւն չընելով շատ մեծ սխալ կ'ընէին: Դեսպանատան գործակատար Kostantin Freiherr von Neurath ալ իրեն համակարծիք էր: Բան-Ճերմէնիք վարդապետութեան՝ «աւելի տկար ազգ մը պէտք է ոչնչանայ եւ կուլ տրուի իր մեծ դրացիին կողմէ» գաղափարին հաւատացող, դեսպանատան ծովային ուժերու կցորդ Human գերմանական միջամտութեան համամիտ չէր:

Գերմանիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան խորհրդական (undersecretary) Zimmerman, որ աւելի յետոյ նախարար կը լլայ, 4 Հոկտեմբեր 1915-ին Zeitung Vedlag թերթին մէջ հետեւեալը կը գրէ. «Հայերու պատճառով թուրքերու հետ մեր փոխարաբերութիւնները վտանգել շիտակ չէ: Անշուշտ թէ այս անմեղ ժողովուրդին թուրքերու կողմէ կրած տառապանքը շատ յուզիչ է: Սակայն հայերը, պատերազմական ճակատներու վրայ, թուրքերու օգնութեամբ, քաջաբար մարտնչող եւ արիւն թափող մեր եղբայրներէն եւ զաւակներէն աւելի մօտ չեն մեզի»: 29 Սեպտեմբերին, Gottlieb von Jagow, այն ատեն տակաւին Արտաքին Գործոց Նախարար, երեսփոխանական ժողովին մէջ արդէն նման արտայայտութիւն մը ունեցած էր:

Այսպէս ամբողջ ազգ մը բոլորին աչքին առջեւ կոչնչացուէր եւ ոչ ոք այս անմարդկային վիճակին կրնար արգելք հանդիսանալ: Համաձայնական Պետութիւնները արդէն Օսմանացիներուն դէմ կը պատերազմէին, որով ջարդերը կեցնելու համար բան մը չէին կրնար ընել: Թալաթի եւ Էնվերի հաշիւն ալ արդէն այս էր:

Դեսպան Վանկենհայմի մահէն յետոյ նոր դեսպան Count Wolff Metternich կը յաջողի գերմանական մամուլի մէջ հայկական ջարդերու դէմ պայքար մը բանալ: Թէեւ այս վիճակը երկու երկիրներու փոխարաբերութիւններուն կրնար վնասել, սակայն դեսպանը համոզուած էր, թէ Օսմանեան Կայսրութիւնը առանձինն հաշտութեան համաձայնագիր պիտի չստորագրէր, նամանաւանդ որ Անգլիական կառավարութիւնը ներկայ Թուրք կառավարութեան հետ բանակցիլ պիտի չուզէր:

Աքսորը եւ ջարդերը կը շարունակուէին:

Այդ օրերու գերմանական քաղաքականութիւնը շատ յստակ էր. Փոքր Ասիայէն ոչ-մահմետական տարրը հեռացնել եւ տարբեր վայրերէ բերուած մահմետականները անոնց տեղը տեղաւորել: Գերմանիա այս Բան-Ճերմէնիք վարդապետութիւնը կը գործադրէր: Որոշ թիւով ֆրանսացիներ եւ պելճիքացիներ կը տեղահանուէր ու անոնց տեղը գերմանացիներ կը բերուէր: Աւստրիա-Հունգարիան ալ մեծ թիւով սերպեր ջարդած, մաս մըն ալ դէպի երկրին խորքերը տարած էր:

Բան-Ճերմէնիք քարոզիչներէն Dr. Paul Rohrbach տակաւին 1913-ին խորհուրդ տուած էր հայերը տեղահանել, Հիճազի երկաթուղիին շուրջ տեղաւորել եւ անոնց տեղերը Կովկասի, Մագլտոնիայի եւ Պոսնիայի մահմետականները տեղաւորել:

Թուրքերն ալ ճիշդ այդ ըրին: Ըստ ամերիկեան դեսպան Հէնրի Մորկընթաուի, հազիւ թէ հայ գիւղացիները իրենց տեղերէն կը հեռացուէին, ուրիշ վայրերէ բերուած մահմետական գաղթականները (muhajir) անոնց տեղերը կը տեղաւորուէին: Երբ արքայազն հայեր յարձակումներու կենթարկուէին, անօթութենէ, ծարաւէ ու հոգնութիւնէ կը մեռնէին, այս մուհաճիւրներու տեղափոխութեան ընթացքին անոնցմէ ոչ մէկը յարձակումի ենթարկուած, կամ անօթութենէ եւ ծարաւէ մեռած է:

Առաջին Աշխարհամարտը սկսելէ մի քանի ամիս առաջ, Օսմանեան Կառավարութիւնը Անատոլիոյ ծովեզերեայ քաղաքները բնակող 100,000 յոյն Եզեական կղզիները կ'աքսորէ: Պոլիս գտնուող գերման ծովակալ Usedom, Հէնրի Մորկընթաուին կըսէ, թէ այս տեղահանումը գերմանները թելադրած էին:



Տօքթ. Եոհաննէս Լէփսիուս

Գերմանացի կղերական Տօքթ. Եոհաննէս Լէփսիուս (Dr. Johannes Lepsius), Պոլիս, ջարդերու կապակցութեամբ տեղեկութիւններ հաւաքելէ յետոյ զանոնք «Գաղտնի Տեղեկագիր» խորագրով կը հրատարակէ: Այս 303 էջերէ բաղկացեալ գիրքը երեսփոխաններուն, եկեղեցականներուն, հանրային գործիչներուն կը բաժնէ: Ան, գրքին նախաբանին մէջ գրած է. «Քրիստոնէութեան ամէնէն հին ժողովուրդը բնաջինջ ըլլալու վտանգին մէջ է...: Հայ ժողովուրդի եօթէն վեցը իր ստացուածքներէն կողոպտուած է, արտաքսուած իր ընտանեկան երդիքէն եւ եթէ չէ իսլամացած, սպաննուած կամ անապատին մէջ տարագրուած է»: Օսմանեան դեսպան Իպրահիմ Հաքքը փաշայի առարկութեան հետեւանքով Արտաքին Գործոց Նախարարութիւնը մնացեալ հատորները կը բռնագրաւէ: Ան գերմանական քաղաքականութեան դէմ չարտայայտուելու խոստումով կը մեկնի Հոլանտա, ուր կը շարունակէ իր մարդասիրական աշխատութիւնները:

Օսմանեան Կառավարութիւնը 1916-ի Օգոստոսի 10-ին հռչակուած «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագծով, գործածութենէ կը դադրեցնէ 1863-ին վաւերացուած Հայկական Սահմանադրութիւնը: Էջմիածնայ Կաթողիկոսին Պոլսոյ Պատրիարքութեան վրայ ունեցած իշխանութիւնը անընդունելի կը նկատէ: 1895-էն ի վեր աթոռը թափուր մնացած Աղթամարի Կաթողիկոսութեան վերջ կուտայ: Պոլսոյ Պատրիարքը՝ Զաւէն Տէր-Եղիաեան Սրբազանը, կը պաշտօնագրկէ եւ Պաղտատ կ'աքսորէ: Պատրիարքութիւնը եւ Սիսի կաթողիկոսութիւնը կը միացնէ ու Կաթողիկոս-Պատրիարքը՝ Սահակ Կաթողիկոսը, Երուսաղէմ կ'աքսորէ:

1916-ի աւարտին այս աննախընթաց քսորները եւ ջարդերը վերջ գտած էին:

Դեսպան Հենրի Մորկընթաու կը գրէ. «Ըստ Թուրքերու հպատակ ժողովուրդներ այնքան ատեն որ թուրքերու համար օգտակար են ապրելու իրաւունք ունին: Երբ այս օգտակար ըլլալու վիճակը վերջ կը գտնէ, անոնք պետք է բնաջնջուին» Ըստ Հենրի Մորկընթաուի Թալաթ իրեն ըսած է, թէ. «Եթէ կուզենք մեր ձեռքը մնացած հողերով մեր գոյութիւնը շարունակել, պետք է ձերբազատուինք այս օտար ժողովուրդներէն» Այն ինչ որ Համիտ չկարողացաւ իրագործել, Երիտթուրքերը իրենց համար գլխաւոր նպատակ դարձուցին եւ ճիշդ այդ պատճառով ալ Թալաթ իր բարեկամներուն ըսած է, թէ «Սուլթան Համիտի 30 տարուայ մէջ չկարողացածը, ես երեք ամսուայ մէջ կատարեցի»:

1916-ի Օգոստոսի 31-ին, Թալաթ, Գերմանիոյ դեսպանատան ներկայացուցիչ Furst Hohenlohe-Langenburg-ին. «Հայկական հարցը այլեւս գոյութիւն չունի» ըսած է: Այդ հասկացողութեամբ ալ Մորկընթաուէն պահանջած է իրեն յանձնել հայերու ամերիկեան ապահովագրական ընկերութիւններու մօտ գտնուած ապահովագիրները:

Թալաթ հայոց արքայն ու բնաջնջումը կարդարացնէ հետեւեալ ձեւով. Հայեր ի վնաս թուրքերու հարստացած էին, ռուսերուն օգնելով թուրքերուն ձախողութեան պատճառ եղած էին, ինչպէս նաեւ կուզէին անկախ պետութիւն հաստատել եւ թուրքերու վրայ իշխել:

1 Յունուար 1917-ին, Պեոլինի Վեհաժողովի համաձայնութիւնը չեղեալ կը նկատուի: 61-րդ յօդուածն ալ իր արժէքը կը կորսնցնէ: 4 Փետրուարին Թալաթ կը նշանակուի վարչապետ՝ փաշայի աստիճանով:

1918-ի Հոկտեմբերի 8-ին, զինադադարի խնդրանքով, Թալաթ փաշայի գլխաւորած կառավարութիւնը կը հրաժարի: 14 Հոկտեմբերին Ահմէթ Իզզէթ փաշա կը կազմէ նոր կառավարութիւնը: 30 Հոկտեմբերին կը ստորագրուի Մուտրոսի (Mudros) զինադադարը:

Զինադադարէն անմիջապէս յետոյ, Նոյեմբերի 1-ի գիշերը, Թալաթ, Էնվեր, Ճեմալ, Տօքթ. Պահաթթին Շաքիր, Տօքթ. Նազըմ, Պետրի, Ազիմ եւ մի քանի փոքրաստիճան սպաներ գերմանական ընդծովեայով մը Օտեսա կը փախչին: Էնվեր Խրիմի վրայով կանցնի Պաթում, Ճեմալ՝ Աֆխանիստան, Թալաթ եւ միւսները՝ Պեոլին:

Սուլթան Բեշատի մահով 1918-ի Ապրիլին գահ կը բարձրանայ Վահտէթթին, որ Իթթիհատականներու դէմ միշտ ատելութիւն ունեցած էր: Ան վարչապետէն կը պահանջէ իթթիհատականներու հրաժարումը: Նոյեմբերի 8-ին Ահմէտ Իզզէթ փաշա կը հրաժարի եւ Թէվֆիք փաշա Նոյեմբերի 18-ին կը կազմէ նոր կառավարութիւնը:

Դեկտեմբեր ամսուայ մէջ յաղթական Համաձայնական Պետութիւնները Պոլիսը իրենց հակակշռին տակ կ'առնեն:

Սուլթան Վահտէթթինի հրամանով Հիրրիյէթ վէ Իթիլաֆ կուսակցութիւնը կը վերահաստատուի:

1918-ի Դեկտեմբերի 16-ին կայսերական հրամանով, 8 Յունուար 1919-ին կը կազմուի զինուորական ատեան, դատելու Իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամները, Սաիթ Հալիմ եւ Թալաթ փաշաներու կառավարութիւններուն

նախարարները, պետութիւնը առանց երեսփոխանական ժողովի որոշման Ա. Աշխարհամարտի մասնակցնելու եւ հայկական ջարդերը կազմակերպելու ամբաստանութեամբ:

4 Մարտ 1919-ին Թէվֆիք փաշայի կառավարութիւնը կը հրաժարի եւ Տամաթ Ֆերիթ փաշա Հիւրրիյէթ վէ Իթիլաֆ կուսակցութեան անդամներով կը կազմէ նոր կառավարութիւն մը:

Մարտի 8-ին, Երիտթուրքերու պարագլուխներու անունները՝ 31 կուսակցական եւ կառավարական բարձրաստիճան գործիչներ, կը յանձնուին զինուորական ատեանին: Դատաւարութիւնները կը սկսին Ապրիլի 27-ին եւ կը տեւեն մինչեւ Յունիսի 26-ը, ամբաստանեալներէն 20-ին ներկայութեան եւ 11-ին բացակայութեան: Դատավճիռը կարձակուի Յունիսի 5-ին:

Դատավարութեան ներկայացուած զանազան փաստաթղթերէ, ծածկագիր հեռագիրներէ, նամակներէ ի յայտ կուգայ, թէ արեւմտահայութեան տեղահանութիւնները եւ կոտորածները զինուորական եւ կարգապահական միջոցառումներ չէին, սահմանափակ կամ տեղական բնոյթ չունէին, այլ հայերը ոչնչացնելու նպատակով կանխամտածուած ծրագիր մըն էր, որ կուսակցութեան կեդրոնական կոմիտէին միջոցաւ տրուած յատուկ հրահանգներով եւ գաղտնի հրամաններով իրագործուած էր: Կովկասեան ճակատի 3-րդ բանակի նախկին հրամանատար Վեհիբ փաշայի վկայութեան համաձայն հայերու բնաջնջումը եւ ինչքերու կողոպուտը կուսակցութեան կեդրոնական կոմիտէին կողմէ վճռուած էր:

Դատարանը ի բացակայութեան մահուան կը դատապարտէ Թալաթը, Էնվերը, Ճեմալը եւ Տօթթ. Նազըմը: Նոյնպէս ի բացակայութեան 15 տարուան կը դատապարտուին Էլեւմտական նախարար Ճավիթը, հողագործութեան եւ առեստուրի նախարար Մուստաֆա Շերէքը ու ներկաներէն շէյխ ուլ-իսլամ Մուսա Քազըմը:

Դատավարութեան արձանագրութիւնները եւ որոշումները կայսերական պաշտօնաթերթ Թաքվիմի Վեքայիի (Takvim-i Vekayi) 1919-1920 թուականներու յաւելուածներուն մէջ, շատ քիչ տպաքանակով, կը հրատարակուին:

1921-ին, Իտալիոյ Սան Ռեմօ քաղաքին մէջ, Սատրազամ Բրէս Սաիթ Հալիմ փաշայի, 1922-ին ալ Թիֆլիսի մէջ Ճեմալ փաշայի ու Պեռլինի մէջ ալ Տօթթ. Պահաէթթին Շաքիրի մահավճիռները կը գործադրուին հայերու փամփուշտներով:

Կարմիր բանակի սպաներէն Յակոբ Մելքումեան իր փոքր խումբով, 1922-ի Օգոստոսի 4-ին, Կեդրոնական Ասիոյ Պուխարա քաղաքին մէջ, Կարմիր բանակի դէմ իր «իսլամի բանակ» կոչուած զունդին հետ կռուող Էնվեր փաշայի մահավճիռը կը գործադրէ: Կը սպաննուին նաեւ անոր հինգ դիկնապահները:

1921-ի Յունիսի 2-ին, Սողոմոն Թեհլիրեան, Պեռլինի մէջ, Թալաթը բնակած շէնքին առջեւ ճակատէն զարնելով գետին կը տապալէ: Թեհլիրեան գերմանական ատեանի առջեւ կը դատուի ու անպարտ կարձակուի:

Գերմանացի Klaus Wagner «Եկէ՛ք, մեր մակարդակէն ցած ժողովուրդները բռնի աքսորենք, որպէսզի հետագայ սերունդները մեզի երախտապարտ ըլլան» ըսած է: Հանրապետական Թուրքիան ալ իր երախտագիտութիւնը ցոյց տալու համար ջարդարար Թալաթի աճիւնները 1943-ին երկիր կը փոխադրէ ու Պուլիս, Հիւրրիէթի Էպետիյէ Թեքեսի (Hurriyet-i Ebediye Tepesi), մեծ շուքով կը թաղէ: Էնվերի

աճիւններն ալ, շնորհիւ Թուրքիոյ Կարմիր Մահիկ հաստատութեան Թաճիկիստանի տուած երկու միլիաո ԹԼ օգնութեան, 1996ին երկիր կը բերուին եւ Կ. Պոլսոյ մէջ եօթը միլիաո ԹԼ-ի շինուած շիրմի մը մէջ կամփոփուին:

Արմէն Քիրքճեան

---

## Աղբիւրներու Ցանկ

Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանին Առաջ - Ճոն Կիրակոսյան, Գիրք երկրորդ, Երեւան, 1983  
Թուրք Բժիշկների Ոճրագործությունները Մեծ Եղեռնի Ժամանակ - Վահան Գոյումճյան, Երեւան, 2001  
Հայաստանի Հանրապետութիւն - Սիմոն Վրացեան, Բ. Տպագրութիւն, Պէյրութ, 1958  
Հայերի Ցեղասպանությունը Ըստ Երիտթուրքերի Դատավարութեան Փաստաթղթերի - Ա.Յ.Փափազյան, Երեւան, 1989  
Հայոց 1915-1916 Թվականների Ցեղասպանության Հարցերը Հայ Պատմագրության մէջ - Մհեր Կարապետյան, Երեւան, 1998  
Պատմութեան Քառուղիներում-Ազատագրված Ժողովրդի Վերածնունդը - Գալուստ Ա. Գալոյան, Երեւան, 1982  
Armenia The Case For A Forgotten Genocide - Dickran H. Boyajian, N.J. USA 1972  
The Armenian Genocide - History, Politics, Ethics - Richard G. Hovannesian Ed. New York, 1992  
The History of Armenian Genocide - Vahakn N. Dadrian, R.I. USA, 1995  
The Murder Of A Nation - Henry Morgenthau, New York, 1974  
The Times - History of The War - London, UK, 1916  
Belgelerle Uluslarasi Rekabette Ermeni Sorunu`nun Kokeni, 1878-1918 - Nursen Mazici, Istanbul, 1987  
Ermeni Dosyasi - Kamuran Gurun, Istanbul, 1988  
Ermeni Tabusu -(Les Armeniens - Histoire D`un Genocide)-Yves TERNON- Turkish translation by Emirhan Oguz, Istanbul, 1993  
Ittihat ve Terakki ve Icinde Donenler - Samih Nafiz Tansu, Istanbul, 1960  
Teskilat-I Mahsusa - Dr. Philip H. Stoddard - Turkish translation by Tansel Demirel, Istanbul, 1994  
Turk Ulusal Kimligi ve Ermeni Sorunu - Taner Akcam, Istanbul, 1994  
Turkiye'nin Cokusu - Huseyin Kazim Kadri, Istanbul, 1992